Ազգ
Azg
17-23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2025 ՈՒՐԲԱԹ 036(5860)
ISSN: 1829-1651
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

# Հայոց ցեղասպանության նահատակ հոգեորականի՝ Իգնատիոս արք. Մալոյանի սրբադասումը առաջիկա կիրակի

Հոկտեմբերի 19-ին ժամը 10. 30-ին Վատիկանի սուրբ Պետրոսի հրապարակում տեղի կունենա երանելի **Իգնատիոս արք. Մալոյանի** եւ 6 այլ երանելիների սրբադասման հանդիսավոր արարողությունը, որ գլխավորելու է Նորին սրբություն **Լեւոն ԺԴ պապը**: «Վատիկաննյուզի» սույն ծանուցմանը հավելենք Լիբանանի Հ. Կ. Պատրիարքական թեմի հաղորդագրությունը, որ իրազեկում է, թե հոկտեմբերի 20-ին ժամը 11-ին հանդիպելու են Հռոմի քահանայապետ Լեւոն ԺԴ պապին, իսկ նույն երեկոյան՝ ժամը 18-ին սուրբ Պետրոսի տաճարում գոհաբանական պատարագ է կատարվելու Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Ն.Ա.Գ.Տ.Տ. **Ռափայէլ-Պետրոս ԻԱ. Մինասեան** պատրիարքի հանդիսապետությամբ:

⇨2

## ՕՐԵՐԻ ՀԵՏ

# Հերթը հասավ քահանայից դասին: Հաջորդը՞...

Հայաստանում ստալինաբերիական ժամանակները վերադարձել են: Ոչ, դեռեւս եկեղեցիներ չեն քանդում, այդ գործը թողել են Ալլահշյուքյուր Փաշազադեին, սակայն հետեւողականորեն շարունակում են եկեղեցականների, բարերարների, հավատացյալների հալածանքը, խուզարկություն-ձերբակալությունները, կեղծուպատիր գործեր հարուցելը, նրանց քննչական օրգաններ բերման, կամ ավելի ճիշտ՝ տարման ենթարկելը, դատարաններում մեղավորի աթոռ նստեցնելը, ԱԱԾ պադվալներում եւ այլ կալանախցերում նրանց խցկելը: Ամենայն հավանականությամբ շուտով կարգելվի մոմավառությունը, եկեղեցիների գանձանակներում հավատացյալի լումա գցելը, կալանք կդրվի Մայր աթոռի եւ Առաջնորդարանների բանկային հաշիվների վրա, եղած գումարները կբռնագանձվեն հօգուտ պետբյուջեի, ավելի շուտ՝ «Իմ քայլը» եւ ընտանեկան այլ հիմնադրամների: Իսկ վերջում տեղի կունենա վճռական գրոհը Վեհարանի վրա, Ամենայն հայոց կաթողիկոսի կալանավորումը եւ նոր կաթողիկոսի ընտրությունը՝ Վաղարշապատի քաղաքապետական ընտրություններին զուգահեռ: Դա կլինի իսկական փառապսակը նիկոլական դարաշրջանի, Հայաստանի 4-րդ հանրապետության: Մեր իշխանությունը արժանի է դրան, կառավարության սեփականատերը ինչպիսի՜ ջանքեր է գործադրել Կաթողիկոսին ու բարձրաստիճան մյուս եկեղեցականներին սովորեցնելու համար, թե ի՞նչ է նշանակում կուսակրոնությունը, մաքուր, անբասիր հոգեւոր գործիչ լինելը: Հոգեւորականներից նրանք, ովքեր դեռեւս չեն յուրացրել այդ դասերը, դեռեւս չեն ըմբռնել խրատները, չեն սովորել, որ չի կարող վարչապետի տեսակետներին հակասող տեսակետ լինել, եւ անսաստողները պետք է հրաժարական ներկայացնեն, ապա թե ոչ՝ ի՛նքը նրանց գահընկեց կանի, կազատի աշխատանքից:

Դժբախտաբար, եղել են ու դեռ կան դասերը չյուրացրածներ, ինչպես՝ Բագրատ արք. Գալստանյանը, Միքայել արք. Աջապահյանը, որոնց օրերս միացավ Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպս. Պռոշյանը, որոնց կարող են միանալ թեմակալ մյուս առաջնորդները եւս, որոնք բանտախցերում կմնան այնքան ժամանակ, քանի դեռ չեն յուրացրել իրենց տրված դասը, ինչը վերաբերում է նաեւ աշխարհական բարերարներին՝ ի գլուխ ունենալով Սամվել Կարապետյանին, որը դեռ համառում է «ի՛ր ձեւով» մոտենալ հարցերին, ինչը նշանակում է ապստամբություն, զինյալ հեղաշրջման փորձ, որի համար էլ երկարաձգվեց նրա պատժամիջոցը եւս երկու ամսով, արդարամի՜տ մեր դատարանի վճռով:

Ու քանի որ բարձրաստիճան եկեղեցականների համառությունը, ցավոք, փոխանցվել է նաեւ հոգեւորականների ավելի համեստ խավին՝ քահանայից դասին, հոգատար մեր կառավարության սեփականատերը որոշել է նրանց եւս ընդգրկել դաստիարակչական աշխատանքներում. ընդունելության ձերբակալությունները սկսել Օձունի, Մուղնու, Երեւանի եւ այլ վայրերի քահանաներից, թվով արդեն 13 հոգի, որոնք մեծ պատիվ են համարում դա եւ ուրախ են, որ այդպիսով մի քիչ հանգստանալու եւ կազդուրվելու լավ առիթ կլինի իրենց համար: Քահանաները, ըստ չստուգված լուրերի, իբր վստահեցրել են, որ եկեղեցական խորհրդակատարությունների հարցը՝ առավոտյան ու երեկոյան ժամերգությունները կարելի է վստահել սարկավագներին եւ սարկավագուհիներին, կնունքի եւ պսակի արարողությունները՝ ուրարակիրներին եւ ուհիներին: Ամենադժվարը, իբր ասել են նրանք, հուղարկավորության ու թաղման պարագաներն են: Սակայն դրա համար էլ, ճիշտ է՝ նախադեպային, բայց ելք կա՛: Բազմաթիվ են այդ նախադեպերը՝ Մեծ եղեռնից մինչեւ Բաքու, Կիրովաբադ, Սումգայիթ, Մարաղա եւ մյուս սպանդները: Հանգուցյալին հողին ես հանձնում, մի հատ «Հայր մեր» մրմնջում, խաչ հանում եւ... վերջ. հիշատակը պահում ես սրտումդ:

Իսկ ինչ վերաբերում է Հայ առաքելական եկեղեցու դեմ հալածանքների հաջորդ հանգրվանին, անտարակույս դա լինելու է եկեղեցիների եւ աղոթատեղիների, նիկոլական եզրաբանությամբ՝ չուլանների փակումը, հատ-հատ, խաչ առ խաչ, սկիհ առ սկիհ: Մանավանդ որ դրա նախադեպն էլ կա՝ ստալինեւբերիական խորշակը:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Իր ճակատագրի որոշողը դառնալ չկարողացող մեր հանրությունը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Ուզո՞ւմ եք գծեմ ապագա խորհրդարանի քարտեզը. Սամվել Կարապետյանի շուրջ հավաքվածների դաշինքը, ով էլ ղեկավարի այն, կստանա տասնյոթ-տասնութ տոկոս, Ռոբերտ Քոչարյանի շուրջ հավաքվածներինը՝ դրանից մի փոքր ավել կամ պակաս, մնացած մանր- մունր կուսակցությունները՝ արեւմտամետ-եվրոպամետ-եսիմինչամետ՝ բոլորով միասին մի յոթ-ութ տոկոս, ներկա իշխանությունը, գուցե մի փոքր նոսրացված ցուցակով, հիսուն տոկոսից մի ճռթ ավելի: Բոլոր ոչխարներն ու գայլերը ողջ կմնան, երկկողմանի ցուցակներում կհայտնվեն կաշվից առանձնակի դուրս եկած մի քանի լրագրող, մի քանի ճամբարափոխ (երկու կողմից էլ), մի քանի կին ատամնատեխնիկ, իսկ ահա այժմ եւ երեսուն տարի առկա տնտեսաքաղաքական պլուտոկրատիան (ընչապետությունը) եւ նրա ստեղծած կրիպտոկրատիան (գաղտնապետությունը) կպահպանի բոլոր, բացառապես բոլո՛ր լծակները՝ մի քանի նոր դեմքերով ծածկելով իր աղճատ, աճպարար, կրիմինալի եւ թաքուն գործընթացների մեջ գծերը կորցրած դեմքը:

⇨2

# «Ադրբեջանի հակահայ ատելության քաղաքականությունը հանգուցալուծում չի գտել»

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Արցախցիների ոտնահարված իրավունքների մասին մշտապես բարձրաձայնող Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպությունը (CSI) հոկտեմբերի 11-ին Արցախի մարդու իրավունքների նախկին պաշտպան, պետնախարար, նախագահի խորհրդական **Արտակ Բեգլարյանի** հետ Ժնեւում հանդիպումից հետո («**Ազգի**» սեպտեմբերի 26-ի համարում անդրադարձել ենք) 38 րոպեանոց անգլերեն փոդքաստ է հրապարակել, որ վերնագրել է «ԼՂ -ի (ժողովուրդը) բնակիչներն արդյոք ուզո՞ւմ են վերադառնալ» (Do the people of Nagorno Karabakh want to return?):

ԼՂ-ի ողջ բնակչության էթնիկ զտումից հետո, Ադրբեջանը հայերի հեռանալն անվանեց «կամավոր»: Ի՞նչն էր ստիպել ԼՂ-ի ժողովրդին հեռանալ իր բնօրրանից: Ինչո՞ւ և ինչպե՞ս են նրանք հիմա ուզում տուն վերադառնալ: Այս հարցերի ճշգրիտ լուսաբանումն է Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպության ներկայացուցիչ **Ջոյել Ֆելդքամփի** (Joel Veldkamp) փոդքասթի նպատակը, որ զրույցի ժամանակ հայտնում է, թե ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդում Ադրբեջանը մշտապես հակադրվում եւ կեղծ է որակում իրենց ներկայացրած՝ ԼՂ հայության բռնաճնշումների, շրջափակման, էթնիկ զտման, ոճրագործությունների, բռնագաղթի փաստերը, եւ հույժ կարեւոր է փաստերի՝ ականատեսի շարադրանքը: Ֆելդքամփը քաջածանոթ է արցախյան հարցին, եղել է Արցախում, գիտի ազատագրական պայքարի պատմությունը եւ 2023-ին առցանց հետեւել է բռնագաղթին: Փոդքասթում Բեգլարյանը մանրամասնում է 2023 թվականի շրջափակման համատեքստը, պատմում տանջալից ու երկյուղով լի փախուստի, Ադրբեջանի շարունակական ահաբեկումների մասին, ինչպես նաև անդրադառնում Շվեյցարիայի խաղաղության նախաձեռնությանը եւ միջազգային աջակցության անհրաժեշտությանը:

Ֆելդքամփի առաջին՝ «Դուք ինչպե՞ս դուրս եկաք» հարցին, Արտակ Բեգլարյանի ամփոփ պատասխանը հետեւյալն է՝ հայերի հանդեպ Ադրբեջանի ցեղասպանությունը, էթնիկ զտումը սկսվել է 2020-ին, երբ Ադրբեջանը զավթեց Արցախի տարածքի մի մասը, եւ որեւէ հայ չմնաց այնտեղ: Ադրբեջանը քաղաքացիական բնակչության եւ զինվորականների հանդեպ հոգեբանական ահաբեկչություն կիրառելուց զատ, վայրագ գործողություններ՝ տանջանք ու լլկանք, անդամահատում եւ գլխատում, ագրեսիային զոհ գնացած մարդկանց, դիակների անարգում էր ցուցադրում: Ադրբեջանը պատերազմական տարբեր ոճրագործություններ է գործել՝ ուղեկցելով դրանք հոգեբանական եւ տեղեկատվական գրոհով՝ նաեւ հրադադարի, շրջափակման ժամանակ: Կարմիր խաչի, այլ կառույցների սահմանափակ սնունդն ու դեղորայքը Ադրբեջանը կասեցրեց, 4 ամիս եւ ավելի որեւէ օգնություն չտրամադրվեց: «Տեսնում էինք, որ որեւէ մեկը մեզ չէր օգնում: Միջազգային անպատժելիությունից քաջալերված՝ 2023-ի սեպտեմբերի 19-ին հարձակվեց մեր ՊԲ-ի, մեր ժողովրդի վրա, 24 ժամվա մեջ սպանեցին ավելի քան 220 հոգու, ներառյալ 21 քաղաքացիական անձի, 5 երեխայի:

⇨2

# «Ադրբեջանի հակահայ ատելության քաղաքականությունը հանգուցալուծում չի գտել»

⇨1 Բոլոր երկրների կառավարությունները, նաեւ ՀՀ-ն միայն դատարկ հայտարարություններ էին անում»: Ադրբեջանը շրջափակման ժամանակ անջատել էր էլեկտրաէներգիան, սահմանափակ գազն ու ջուրն էլ սեպտեմբերի 19-ից հետո անհասանելի դարձան: «Արցախցին տեսնում էր, որ ադրբեջանցին իր գյուղ, իր տուն է մտնում, մեծ խուճապ կար, քանի որ բացի ՊԲ-ից մեզ ոչ ոք չէր օգնում: Ադրբեջանը բացեց Լաչինի ճանապարհը, ու ժողովուրդը սկսեց բռնագաղթել»: Սեպտեմբերի 25-ին գազի պայթյունից 240 զոհ գրանցվեց: Նրանք էլ, Արտակ Բեգլարյանի ձեւակերպմամբ, էթնիկ զտման, ցեղասպանության զոհեր են: 70 հոգի էլ բռնագաղթի ճանապարհին մահացան, քանի որ 30-40-50 ժամ ճանապարհին էին:

Արտակ Բեգլարյանը պատմում է ականատեսի՝ անձնական պատմությունը, թե ինչպես է ստիպված եղել ընտանիքի՝ 5 եւ 2-ամյա դուստրերի հետ 2023-ի սեպտեմբերին գիշերով անցնել Լաչինի պոստի անցակետը, Հակարիի կամուրջը, մեքենայից չի իջել, իրեն չեն ճանաչել: Այնուհետ ավտոմեքենան փչացել է, մի քանի ժամ ստիպված են եղել սպասել, մինչեւ հայրենակիցները նրանց օգնել են եւ տեղափոխել մոտակա հայկական գյուղ: Ադրբեջանը միշտ թիրախավորել է Բեգլարյանին, քանի որ նա ամենուր, տարբեր հարթակներից բարձրաձայնել է Ադրբեջանի հանցագործությունների մասին, Արցախի ձայներից մեկն է եղել: Ադրբեջանը հայտարարել է, որ պիտի ձերբակալի եւ պատժի Բեգլարյանին: Նա անջատել է բջջային հեռախոսը՝ տեղորոշման որեւէ հնարավորություն հասանելի չդարձնելով:



*Լուսանկարը՝ Քրիստոնեական համերաշխություն միջազգային կազմակերպության կայքէջից է: Ձախից աջ՝ Ջոյել Ֆելդհամփ, Սարգիս Շահինյան, Արտակ Բեգլարյան, Էրիհ Ֆոնթոբել*

Բեգլարյանը պատմում է, որ անցակետում գլխավոր հարցը մարտական գործողություններին մասնակցությունն է եղել: Շրջափակման ժամանակ շատերն են եղել խուճապի մեջ, եթե ադրբեջանցին տուն մտնի, ի՞նչ հետեւանք կունենա, եթե հայտնաբերի զինհագուստը, լուսանկարները: Շատերը այրել, ոչնչացրել են՝ իրենց եւ հարազատների անվտանգությունն այդպիսով ապահովելով: Բեգլարյանը պատմում է, որ հորը 1994-ին սպանել են «Գորշ գայլեր» ահաբեկչական խմբավորման անդամները, որ Ադրբեջանին սատարելու նպատակով մասնակցում էին Արցախի դեմ պատերազմում, 6 տարեկանում ականի պայթյունից տեսողությունն է կորցրել, բայց բժիշկները փրկել են կյանքը, որակյալ կրթություն է ստացել, առաքելությունն իր ժողովրդին, նրա ճշմարիտ պայքարին, խաղաղությանը ծառայելն է: Արտակ Բեգլարյանը նշում է, որ Ադրբեջանի գործողությունները մասնագիտական եզրաբանությամբ «էթնիկ զտում» է որակել Freedom House-ը, նույնը արձանագրել է Եվրոպառլամենտը, Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան «բռնի տեղահանություն» ձեւակերպումն է վավերացրել: «Շրջափակման ժամանակ Ալիեւն առաջարկեց՝ եթե չեք ուզում դառնալ մեր քաղաքացի, ճանապարհն առանց ետդարձի բաց է, ավելի ուշ էլ նրա հռետորաբանության տարբեր արտահայտություններ ցեղասպանության միտման մասին են վկայում»: Զրույցի ընթացքում անդրադարձ կա վաշինգտոնյան խաղաղության հայտարարությանը: «ԼՂ ժողովուրդն ամբողջապես դուրս է մնացել այդ գործարքից, 150 հազար մարդ դեռ սպասում է խաղաղությանը, վերադարձին, իր անվտանգությանը: Եթե նույնիսկ միջազգային երաշխիքների ներքո վերադառնանք, ասում է Բեգլարյանը, հակամարտության առանցքային կետերից մեկը՝ Ադրբեջանի հակահայ ատելության պետական քաղաքականությունը հանգուցալուծում չի գտել: Մի բան, որ սպառնում է ՀՀ-ին նույնպես, ամբողջ հայությանը:

# Իր ճակատագրի որոշողը դառնալ չկարողացող մեր հանրությունը

⇨1 Իսկ հայ ժողովուրդը, համենայնդեպս՝ ՀՀ քաղաքացիների գերակշիռ մասը, կշարունակի տապակվել սեփական թավայի էժան ձեթում, թաղված հին տապակումների խորը կեղտի մեջ՝ չկարողանալով իր ճակատագիրը որոշող գործոն դառնալ եւ մնալով ուրիշների խաղերի շարքային գործիք որպես: Կշարունակի հետեւել քաղաքական թատրոնի նոր արարներին, Եկեղեցու շուրջ ծավալվող նոր ինտերմեդիաներին՝ պարբերաբար ցնցվելով ընդհանուր ռեժիսուրայի՝ ստանիսլավսկու վրձնին արժանի բարձրակարգ տեսարանների առաջացրած երկրաշարժերից (ասենք՝ հայ-թուրքական սահմանի անսպասելի բացում եւ որպես մանանա իր գլխին թափված թուրքական էժան ապրանքների առեւտրային էմոցիաներից, Թրամփի ճանապարհ անվանյալին տարբեր երրորդ կողմերի սահուն ներկայության արձանագրումից, ցնցող սպանություններից, համացանցային ցունամիների՝ սրա-նրա անկողնային տեսարաններից, Բաքվում հայերի դատավարությունների ժամանակ նոր նվաստացումներից եւ այլն):



Մեր հանրությունը կշարունակի բան չհասկանալ աշխարհում տեղի ունեցողից, Եգիպտոսի, Թել Ավիվի միջազգային հավաքներում խաղարկվողից, թե բա՝ Գազայում, Ուկրաինայում հրադադար կամ խաղաղություն, Թրամփ-խաղաղասերի կերպարի հայտածմամբ՝ սկսյալ օգոստոսյան վաշինգտոնյան արարից, ու դեռ չվերջացրած Թել Ավիվում եւ Շարմ Էլ Շեյխում կատարվողով, Ալիեւով եւ «այն տղայով» ՝ որպես աշխարհի նոր բեւեռացմանը լավ տեղյակներով եւ իրենց դերակատարումը լավ իմացողներով...

Դե իսկ աշխարհում կատարվողը չհասկանալը միգուցե ներվեր մեր հանրությանը, մանավանդ՝ նա չի էլ պատկերացնում, թե ո՞ր աստիճանի փոխկապակցված է մեր ներսում տեղի ունեցող ամեն բան դրսի գործընթացների հետ, բայց որ մեր ներսի աճպարարությունը չի հասկանում, որն արդեն որերորդ անգամ է թարմացվում եւ կրկնվում, ա՛յ դրա համար մեր մարդիկ փոխհատուցելու են իրենց եւ սեփական զավակների հերթական հիասթափվածությամբ, հայրենիքում սեփական երազանքներն իրացնելու իրենց իրավունքը հերթական անգամ զիջելով մի նեղ շերտի եւ չկարողանալով կոտրել ամեն ինչ որոշող հին-նոր համակարգը:

Նրանց հերթական աճպարարական ընտրություններն են սպասվում, նրանք էլի չեն կարողանալու «ոչ» ասել կարծրացած համակարգային աճպարարությանը, որով մի շաս փոքրիկ «էլիտա» անընդհատ վերարտադրվում է՝ փոխելով անոթները, բայց ոչ անոթների բովանդակությունը:

Հաջորդ հրապարակմամբ կանդրադառնանք կոնկրետ քաղաքական ուժերին ու նրանց հնարավորությունների շրջանակին, քանի որ արդեն ակնհայտ է, թե ո՞ր ուժերն են պատրաստվում մասնակցել նոր քաղաքական մրցակցությանը:

# Հայոց ցեղասպանության նահատակ հոգեորականի՝ Իգնատիոս արք. Մալոյանի սրբադասումը առաջիկա կիրակի

⇨1 Արարողությանը հայերեն մեկնաբանությամբ կարելի է հետեւել ուղիղ եթերով՝ Youtube-ի հետեւեալ հասցեով https://www.youtube.com/live/zD–BBY7SR8Q ու նաեւ https://www.vaticannews.va/hy.html կայքէջի միջոցով:

Սուրբ Իգնատիոս Մալոյանը ծնվել է 1869 -ի ապրիլի 15-ին, Մարդինում: 14 տարեկանում կրթություն է ստացել Զըմմառի (Լիբանան) դպրեվանքում: Սովորել է աստվածաբանություն, փիլիսոփայություն, լեզուներ: 1915-ի ապրիլի 30-ին օսմանյան կառավարական մարմինները ներխուժել են Մարդինի հայ կաթողիկե եկեղեցի, առգրավել գույքը, նամակներն ու արխիվը: Մայիսի 1-ին արքեպիսկոպոս Մալոյանը հավաքում է հոգեւորականներին, տալիս վերջին վկայությունը՝ պատգամելով քաջություն, հավատք եւ ուխտապահություն: Հունիսի 3-ին Մալոյանը համայնքային առաջնորդների հետ ձերբակալվում է, հարցաքննվում, բազմիցս առաջարկում են իսլամություն ընդունել: Վճռական մերժում է: Հունիսի 11-ին շուրջ 400 հավատացյալների հետ շղթայված աքսորվում է Մարդինից: «Մալոյանի քարավան» անվամբ է կնքվում տառապալից այն ճանապարհը, որ անցել է: Օսմանյան կառավարության ներկայացուցիչը Մալոյանին բաժանում է քարավանից, վերջին անգամ ներկայացնում հավատափոխ լինելու առաջարկը, որ մահից փրկվելու միակ ուղին էր: «Ես երբեք չեմ ուրանար իմ Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս



Քրիստոսը... Ես զիս կը համարեմ բախտաւորներէն մէկը, որ պիտի հանդիպիմ Աստուծոյ՝ երկինքի բարձրութեանց մէջ», եղել է Մալոյանի պատասխանը:

Իգնատիոս Մալոյանը նահատակվել է 1915 -ի հունիս 11-ին: Նրա քույրերն ու եղբայրներն էլ զոհ են գնացել, անհետացել են Հայոց ցեղասպանության ընթացքին: «Իր մահն իր հաւատքին անձնական վկայութիւնն էր, բայց նաեւ խորհրդանիշը անթիւ հայերու, որոնք Մեծ Եղեռնի ընթացքին մերժեցին հրաժարիլ իրենց քրիստոնէական ինքնութենէն», Մալոյանի կենսագրականն ամփոփում է **Վարդան Թաշճյանը**:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագէտ

# Շարմ Էլ Շեյխի ակամա բացականերն ու լուսանցքային հրավիրյալները

Հայաստանի վարչապետ **Նիկոլ Փաշինյանն** ու Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը**, ինչպես նաեւ բազմաթիվ այլ երկրների ղեկավարներ, ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփի** եւ Եգիպտոսի նախագահ **Աբդել Ֆաթթահ աս-Սիսիի** հրավերով, հոկտեմբերի 13-ին այցելեցին Եգիպտոս՝ մասնակցելու Շարմ Էլ Շեյխում անցկացվող Մերձավոր Արեւելքի խաղաղության գագաթնաժողովին:

Կային նաեւ բացակա երկրներ: Իրանը հրաժարվել էր մասնակցել միջոցառմանը եւ ԻԻՀ ԱԳ նախարար **Աբբաս Արաղչիի** շուրթերով հայտարարել էր, թե «չի կարող հարաբերությունների մեջ մտնել այն մարդկանց հետ, որոնք հարձակվել են Իրանի ժողովրդի վրա եւ դեռ շարունակում են սպառնալ ու պատժամիջոցներ կիրառել»: ԻԻՀ ԱԳՆ խոսնակն էլ հավելել էր, որ Շարմ Էլ Շեյխի գագաթնաժողովին չմասնակցելու որոշումը կայացվել է արտաքին եւ ներքին փորձագիտական քննարկումների արդյունքում:

Գագաթնաժողովին ներկա չէր նաև Իսրայելի վարչապետ **Բենիամին Նեթանյահուն**՝ պատճառաբանելով, որ չի ցանկանում բաց թողնել հրեական «Սիմխաթ Թորա» տոնի արարողություններին մասնակցությունը:

ՀԱՄԱՍ-ն էլ գերադասել էր իր մասնակցությունը գագաթնաժողովին պատվիրակել միջնորդ երկրներին՝ Եգիպտոսին ու Քաթարին:

Գագաթնաժողովի գլխավոր դերակատարը ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն էր, որ նախապես այցելել էր Իսրայել, հանդիպել ՀԱՄԱՍ-ի պատանդների ընտանիքների հետ եւ ելույթ ունեցել Իսրայելի խորհրդարանում (Քնեսեթ), որից հետո մեկնել էր Եգիպտոս:

## Գագաթնաժողովի արդյունքները

Պաշտոնապես ազդարարվեց Գազայի պատերազմի ավարտը, եւ առանց հակամարտող կողմերի մասնակցության ստորագրվեց 20 կետից բաղկացած ծրագիր:

Եզրակացությունն այն է, որ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն հարկադրված եղավ պաշտոնապես հայտարարել Գազայի պատերազմի ավարտի մասին:

Իսկ Թրամփը՝ Եգիպտոսի, Թուրքիայի եւ Քաթարի առաջարկով հայտարարեց, որ ԱՄՆ-ն լինելու է Գազայում հրադադարի երաշխավորը:

Թրամփը նաեւ Շարմ Էլ Շեյխում իր ունեցած մի քանի հանդիպումների ու մամուլի ասուլիսների ընթացքում հրապարակած հայտարարություններով ուրվագծեց Մերձավոր Արեւելքի հարցում Վաշինգտոնի քաղաքականության հիմնական ուղղությունները:

Թրամփը, ինչպես միշտ, խախտելով արարողակարգը, փորձում էր իր անձը դարձնել բոլոր հանդիպումների եւ միջոցառումների կենտրոնը: Նա այս կամ այն գործչին ուղղված երկարաշունչ գովասանքներով, յուրահատուկ արտահայտությունների օգտագործմամբ ու ընդգծված շեշտադրումներով փորձում էր բոլորի ուշադրությունը սեւեռել իր վրա:

## Վերաբերմունքը Իրանի նկատմամբ

Թրամփը թե՛ Իսրայելի Քնեսեթում, թե՛ Շարմ Էլ Շեյխում բազմիցս անդրադարձել էր Իրանին: Մի կողմից նա շնորհակալություն էր հայտնում Իրանին՝ Գազայի խաղաղության գործընթացին աջակցելու համար, մյուս կողմից ակնարկում էր, որ Մերձավոր Արեւելքի հաջորդ խնդիրը վերաբերելու է Իրանի հետ «խաղաղության» հարցին: Նա նույնիսկ ափսոսանք հայտնեց, որ Իրանն այս ժողովին չի մասնակցում՝ արտահայտելով իր համոզմունքը, թե մի օր նա նույնպես կլինի մյուս երկրների կողքին:



Թրամփը կարծես ուզում էր հուսակ մեսիջ տալ, որ Գազայի հարցի լուծումից հետո հերթը Իրանինն է: Նա հիշեցրեց, որ իր պաշտոնավարման սկզբից բազմիցս խոսել է Թեհրանում իրանցի պաշտոնյաների հետ հանդիպելու ցանկության մասին:

## Իրանի բացակայությունը Շարմ Էլ Շեյխում

Այնուամենայնիվ, Իրանի բացակայությունն աննկաս չմնաց: Հնչեցին քննադատական խոսքեր, որ Իրանը կարող էր ներկայանալ առնվազն արտգործնախարարի մակարդակով: Թրամփը եւս ընդգծեց Իրանի բացակայությունը՝ ասելով. «Իրանի տեղն այս դահլիճում բաց է, չնայած նրան հրավիրել էին»:

Անշուշտ, գագաթնաժողովին չմասնակցելու համար Իրանն ուներ իր ծանրակշիռ արդարացումները. Իրանի մասնակցությունը կնշանակեր վերջին երկու տարվա իրադարձությունների՝ հատկապես Գազայի պատերազմի, իմաստազրկում: Իրանը չէր կարող նստել նրանց կողքին, ովքեր, ըստ իր դիրքորոշման, ամենամեծ վնասն էին հասցրել իրեն:

Բացի այդ, այս օրերին Իրանում քննարկվում է ՄԱԿ-ի «մեխանիզմի» գործարկումից ու Իրանի դեմ կիրառվող միջազգային պատժամիջոցների վերականգնումից հետո՝ եվրոպական երկրների ու ԱՄՆ-ի հետ հանդիպումների ձեւաչափի հարցը: ԱԳ նախարարի մասնակցության դեպքում կկանխորոշվեր հանդիպումների՝ Թեհրանի տեսակետով ոչ ցանկալի ձեւաչափը:

Նշենք նաեւ, որ համաժողովին մասնակցում էին միայն ԱՄՆ-ի դաշնակիցները. չկային ո՛չ Չինաստանի, ո՛չ Ռուսաստանի, ո՛չ էլ Լատինական Ամերիկայի կամ Աֆրիկայի երկրների ներկայացուցիչներ: Սա, ըստ Իրանի, հստակ մեսիջ էր, որ միջոցառումը ոչ միայն Գազային էր նվիրված, այլ վկայում էր համաշխարհային ճամբարների բաժանման մասին: Իսկ Իրանը մտադիր չէր հայտնվել իր համար ոչ ցանկալի ճամբարում:

## Հայաստանն ու Ադրբեջանն ի՞նչ ստացան գագաթնաժողովից

Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւի** եւ Հայաստանի վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** ներկայությունը Շարմ Էլ Շեյխի գագաթնաժողովին՝ այն դեպքում, երբ մի քանի ամիս առաջ նրանք Թրամփի ներկայությամբ Վաշինգտոնում խաղաղության շուրջ համաձայնության էին եկել, ներկայացվեց որպես ԱՄՆ նախագահի՝ խաղաղության ուղղությամբ գործադրվող ակտիվ ջանքերի դրսեւորում:

Այս երկու երկրների մասնակցությունը Շարմ Էլ Շեյխի համաժողովին, առանց այս հիմնավորման, անիմաստ կլիներ, եւ ամենայն հավանականությամբ հրավեր էլ չէին ստանա:

Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարների հետ հանդիպումը լրացուցիչ հնարավորություն էր ԱՄՆ նախագահին՝ քարմացնելու իր հիշողությունը, որ Հարավային Կովկասում գոյություն ունեն Հայաստան եւ Ադրբեջան անուններով երկու պետություններ, որոնցից մեկի ղեկավարի անունը Ալիեւ է, իսկ մյուս տղայինը՝ Փաշինյան:

Իսկ միջոցառման հրավիրյալներ Ալիեւն ու Փաշինյանն իմացան, որ Հայաստանի եւ Ադրբեջանի 32-ամյա հակամարտության կարգավորումը ձեռք է բերվել ընդամենը մեկ ժամվա ընթացքում:

# Վահէ Պողոսյան. «Չեմ կարծեր, թե առանձնահատուկ շնորհ ունիմ. ունեցածս միայն սէրն է իմ ընտանիքիս, մշակոյթիս եւ մեր պատմութեան հանդէպ»



Պատմաբան **Վահէ Պողոսյանը** ծնվել եւ մեծացել է Լոնդոնում: Մայրը սուդանահայ է: «Սուդան ալ կան, եղած են հայեր, հետեւաբար՝ հայ մշակոյթ: Մեծ մասամբ ցեղասպանութենէն վերապրածներ են, որ ոչ միայն ապրած են, այլ կրցած են իրենց հայկական ինքնությունը պահել եւ նոր մշակոյթ ստեղծել», ասում է Վահեն:

2023-ի ապրիլին Սուդանի պատերազմի սկսելէն ետք, Պողոսյանը որոշում մը կը կայացնէ: Տեսնելով պատերազմի դառն հետեւանքները, հուսալքության ճանապարհը չընտրեր, այլ կսկսի մուլթիմեդիա առաջին արխիվը բանալ սուդանահայերու եւ նրանց պատմության մասին՝ պահպանելով, նաեւ փրկելով պատերազմի անդառնալի կորուստ մը դառնալէ:

Վահեն արխիվի աշխատանքները սկսած է 2025 թվականի հունվարին՝ Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ:

Պողոսյանը այժմ կը բնակի Հայաստան: Ուսումնասիրություններու ընթացքին կը գտնէ նաեւ ինքզինք՝ սփիւռքահայու կապը Հայաստանի հետ: Անոր ծրագիրին կարելի է հետեւիլ՝ այցելելով Instagram-ի @sudanahye էջը կամ www.sudanahye.com կայքի միջոցով:

Արխիվին աշխատանքները Վահեն նաեւ ցուցադրած է տարբեր քաղաքներու մեջ. օգոստոս 9- ին՝ Ամստերդամ եւ օգոստոս 16- ին՝ Լոնդոն, այդպիսով սուդանահայերու մշակոյթը աշխարհի տարբեր երկիրներ հասցնելով:

Վահէ Պողոսյանին հետ մեկ խոսակցությունն ալ բավական է հասկնալու, թե ի՛նչն է իսկապես ամենեն կարեւորը: Լքելով իր կորպորատիվ գործը եւ ամբողջովին նվիրվելով արխիվի ծրագիրին՝ ան վճռական է փրկելու հայոց պատմության մեկ առանձին հատվածը, որ ուրիշ պարագային պիտի կործանվեր տագնապալի օրերուն, ինչպես բազմաթիվ այլ արժեքներ:

Ճիշտ այս մտածելակերպն է դարերով առաջ մղած մեր ժողովուրդը՝ գնահատել եւ այդպիսով պահպանել մեր մշակութային ժառանգությունը՝ որպես գոյատեւման միջոց հազարավոր տարիներ հալածանքներու, պատերազմներու եւ ցեղասպանություններու ընթացքին:

Ո՞վ ենք մենք՝ առանց մեր պատմության, մեր մշակոյթի եւ մեր լեզվի: Ի՞նչ կբնորշէ ազգ մը, եթե ոչ՝ նման արժեքները: Օտարին առաջին հարցումը միշտ մեկն է. «Ո՞վ ես դուն: Ի՞նչ է անունդ: Ի՞նչ կրոնք ունիս»...

Պատմությունը պահպանելն ու հիշելն ամենեւին չի նշանակեր ապրիլ անցյալին մեջ կամ սառչիլ անոր մեջ: Ընդհակառակն՝ այդ է միակ ճամբան դեպի ուժեղ եւ ինքնահարգանք ունեցող ապագա:

Այս օրերուն, երբ մարդիկ կը փորձեն հարցականի տակ դնել մեր պատմությունը, կամ թույլ տալ, որ ան մոռացության մատնվի, ընթերցողը պէտք է սկսի խորհիլ ավելի լայն պատկերին մասին. ի՞նչ կընեմ հիմա, որպեսզի ապագա սերունդները կարենան ապրիլ եւ փոխանցել մեր հայկական ինքնությունը:

ՍԱԹԵՆԻԿ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ
Գերմանիա

# Հիշողության լուսավոր ուրվանկար

## Կարպիս Սուրենյան -100

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Անցյալը հիշողության մեջ մնում է նշանների ձեւով, փակ թե բաց աչքերով ներսուզումների մեջ, ուր ասես թափառող միտքդ հիշեցնում է տարբեր դեմքեր ու դեպքեր: Չգիտեմ ինչից է, մնում է այն, ինչ կարեւոր է եղել, բախտորոշը, նաեւ հակառակը, գուցե հիշողությունը ենթագիտակցական շերտերից աննշան դեպքեր ու երեւույթներ էլ է վեր հանում, բայց երբ գրի առնել ես փորձում, անտեսելի զտում է կատարվում, ամեն բան չէ, որ գիրդ ներս է. թողնում:

Ներկա օրերի` երբեւէ անհավանական համարվող, անասելի ցավ ու խռովք պատճառող իրողություններից. հեռանալու ձեւ է հավանաբար վերհուշին տրվելը, մանավանդ հիշողությունները անցյալում հանդիպած հազվադեպ բարձր որակներով ու տաղանդներով օժտված այն սակավ մարդկանց մասին, ովքեր հանդիպեցին ինձ հիմնականում «**Ազգ**» օրաթերթում աշխատելու տարիներին:

Այսպիսի սկիզբը պատահական չէր, երբ հիշողությանդ մեջ արթնանում է **Կարպիս Սուրենյանի** նման գրողի, մտածողի, թարգմանչի, բացառիկ շիտակ մարդու, ինձ համար` ուսուցչի կերպարը, որի հետ երկար զրույցները «**Ազգի**» միջանցքներում., խմբագրատան մոտակա այգում հիմնականում այս բնույթի էին,. նաեւ անհամաձայնություններ ունեինք իհարկե, կրոնական եւ նման այլ հարցերին վերաբերող: Եվ ինչ լավ ժամանակներ էին,. հագեցած, իմաստավորված,. ափսո՜ս պահը, դրա գնահատումը ժամանակին չի գիտակցվում:

Մեր զրույցները կյանքի ու մահվան, արվեստի, փիլիսոփայության, կրոնի ու գիտության մասին թվում էին կրկնվող, բայց ամեն անգամ նոր հարցերը, նոր մոտեցումները, մտքերի նոր հոսանք էին բերում:

...Մենք կյանքի հանդեպ մերկ ենք ու երբեք չենք կարող կանխել անկանխելին: Երբ. հուշագրության պես մի բան փորձեցի գրել, ժամանակները հենց սկզբից խառնվեցին, հասկացա` հարցերը, որ շատ երկար հետապնդում էին ինձ` մարդու այստեղ լինելու, նրա սահմանափակ կյանքի իմաստի ու նշանակության, չունեն հստակ, այսինքն բավարարող պատասխան` ո՞չ կրոնական, ո՞չ գիտական հարթություններում: Առաջինը բազում հարցեր է առաջացնում, համոզիչ պատասխաններ չկան, զուտ հավատին կուրորեն ապավինելը նման է մտքի քարացմանը, ամայացմանը: Ժամանակակից. գիտության, քվանտային ֆիզիկայի մի շարք տեսաբանների տարբեր վարկածներով` ինչպես տիեզերքի սպիրալաձեւ, անընդհատական փուլային զարգացումների, այս հարցերը մոտեցնում են հոգու անընդհատության` անվերջ վերածնվող, ասել է թե ցիկլային գաղափարին:

Ամենը` ամենափոքր մասնիկից սկսած մինչեւ համաստեղություններ ու գալակտիկաներ, միասնական,. մեկ Ամբողջություն են,. յուրաքանչյուրը ամբողջականության մաս է: Մի բան, որ հնարավոր է զգալ խորը կենտրոնացումների ժամանակ միայն, սեփական մտքի վերացարկման պահերին:

Այսպիսի զգացում առաջին անգամ Կարպիս Սուրենյանի Լմբատավանքի մասին էսսեն ընթերցելիս ունեցա. նկարագրվում է 6 րդ դարի վանքը,..նրա ներսն ու դուրսը, այն,. ինչ տեսանելի է սովորական աչքով, եւ այն, ինչը հասու է. հոգու տեսողությամբ, ամենագնահատելին ու թանկը` գրողի զգացածն ու ապրածը: Այդ նկարագրության ոսկե լռության մեջ սուզված խոտի խոնարհ կանաչն ու փոքրիկ գլխիկներով կարճլիկ ծաղիկների դեղինը բնության հարմոնիկ ամբողջության սքանչելի ձոն էր: Նկարագրության կենտրոնում Լմբատավանքի` իհարկե բավական վնասված, բայց բացառիկ տպավորիչ որմնանկարներն են, ներս թափանցող լույսից փոխվող, վաղ միջնադարի հայկական վանքի ճարտարապետական ձեւերը միահյուսված են միջավայրին` որպես բնության շարունակություն: Ինչպիսի խորությամբ. է Կարպիս Սուրենյանը զգացել հայ հոգեւոր ճարտարապետության հնամենի ոգին, նա գիտակի, ուսումնասիրողի հայացքով է ներկայացնում կառույցի ճարտարապետության ոճական առանձնահատկությունները,. ամեն. մանրամաս ու դետալ: Այդ տողերի միջից բնությունը վերարթնանում է իր նախնական, մաքուր ձայներով, սրնգի անհայտ մեղեդին շոյում է զգայարանները: Լեզուն նկարագրության,. ապրումները գրողի ներդաշնակված, ձուլված են համապատկերին, հնչում են ինչպես մեղեդի, պոեմ,. բանաստեղծություն, որ հոգու տրամադրություն է, հրճվանք է, սեր ու կարոտ նաեւ: Ահա ստեղծագործության հզոր ուժը, երբ այն քեզ դարձնում է իր շարունակությունը, գրողի ապրումը այնպես է փոխանցվում քեզ, որ դառնում է քոնը: Այն ինձ հիշեցրեց Միսաք Մեծարենցի բանաստեղծության բնապաշտական ոգին:



...Լուռ կիսամութի մեջ լսվում է գրողի սիրելի որդու` **Հովհաննես Սարկավագյանի**` հրաշալի մարդու եւ բժշկի ձայնը. կենսագրական համառոտ ակնարկ լուսանկարային տեսաշարի միջոցով. վերջինը` շատ բնորոշ Սուրենյանի ներքին վիճակին` լավատեսական,. պայծառ,. վարակիչ, համակրելի ժպիտով, աչքերի մեջ խորունկ փայլ` իսկը. իր «Ճիշտը կյանքն է». ձեւակերպման պես: Սուրենյանի 100 ամյակն էր Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում: Նշվեց` ինչպես սովորաբար տեղի են ունենում այսպիսի միջոցառումները:

Կարպիս Սուրենյանին եւ նրա գրականությունը ավելի լավ ճանաչող ու գնահատող քան **Երվանդ Տեր Խաչատրյանն** է, թերեւս չկա: Տասնյակ տարիների մտերմությունը գրողի, նաեւ ընտանիքի հետ նրան հնարավորություն է տվել մոտիկից ճանաչելու, ծանոթ լինելու գրողի կյանքային, ստեղծագործական տարբեր դեպքերին ու հանգամանքներին. մանավանդ նա այն մարդկանցից է, որ գիտի ճիշտ ընտրություն անել, հայացքի ուղղությունը լավագույններին ուղղակի անվրեպ է: Դահլիճը բավական երկար լսեց նրան, մտածելու շատ առիթներ տվեց այդ խոսքը, հասկապես, թե ինչու լավագույնները իրենց ապրած տարիներին միշտ ստվերում են մնում, ինչու չեն գնահատվում ինչպես հարկն է: Ո՞ւմ են գնում զանազան մեդալներ, պարգեւներ ու մրցանակներ:

Ծննդավայր Աթենքի, հունական միջավայրի, նրա հնագույն մշակույթի մթնոլորտը ճաշակել,ապա ուսանել է Կիպրոսի Մելգոնեան վարժարանում: Կրթությունը Բրյուսելում շարունակելու մտադրությունը չիրականացավ, փոխարենը ճանապարհը նրան բերեց հայրենիք, որտեղ իրականությունը անսպասելի փորձություններ էր պատրաստել հայրենադարձ հայության համար: Դժվար, շատ դժվար էր նախ հասկանալ, ապա եւ համակերպվել սովետական մենթալիտետին, ապրելակերպին, մտքի, գաղափարի բռնաճնշումներին, ստեղծագործական խիստ սահմանափակումներին:

Դանդաղ մահվան պես մի բան է ամենօրյա այդպիսի կյանք ապրել դավադրությունների, կասկածների, վախերի մեջ: Այնպես որ ստիպված է եղել չտպագրված վեպի էջերը կրակին մատնել: Բայց նա դիմադրելու շատ ավելի ուժեղ զենք ուներ` ամուր կամք ու բնավորություն, խորը ներաշխարհ, վերլուծական, բաց միտք, բնատուր տաղանդներ:

Հեղինակած երկու տասնյակից ավելի գրքերում («Բնիկ ո՞րտեղացի եք», «Սաքուր ձեռքեր», «Հին պատմություն», «Երանության կղզին», «Արեւորդիներ», «Ոգու ամրոցներ», «Ճիշտը կյանքն է», «Օրագիր») նրա խորաթափանց հայացքի լայն սպեկտրը ընդգրկում է բնության, տիեզերքի, հայության, առհասարակ մարդկության առեղծվածի, գոյութենաբանական շատ հարցեր: Այլ կերպ չէր էլ կարող լինել. համաշխարհային մշակույթին, գրականությանը, փիլիսոփայությանը, կրոններին, նաեւ գիտությանը խորապես տեղյակ, վեց լեզուների տիրապետող մտավորականը, սկզբունքային, ազնվագույն մարդը այդպիսի ժառանգություն, հետք պետք է թողներ:

Կարպիս Սուրենյանի թարգմանական արվեստը հայերեն լեզվի նոր նվաճում էր: «Կարամազով եղբայրներ» վեպի թարգմանությունը մտահղացել է շատ վաղուց, դեռ Մելգոնեան վարժարանում ուսանելիս, հատուկ դրա համար սովորել է ռուսերեն: Պետերբուրգ է գնացել Դոստոեւսկու հետքերով, ամիսներ ապրել այնտեղ` ճանաչելու, վերապրելու այդ միջավայրը, կենցաղը, մշակույթը եւ ստեղծել է բնագրին համարժեք թարգմանական գլուխգործոց` հայերենով իր «Կարամազով եղբայրները»:

«Պսակ թարգմանության» ժողովածուն ընդգրկում է նրա թարգմանությունների ընտրանին, արեւմտյան եւ արեւելյան մշակույթների` իր հոգուն հարազատ գրողների գործեր` Էքզյուպերի, Սամերսեթ Մոեմ, Վիլյամ Սարոյան, ու նաեւ Հեռավոր Արեւելքի իմաստնությունների ընտիր պատառիկներ` հնդկական հնագույն հոգեւոր տեքստերից` Ուպանիշադներից եւ մ.թ.ա. 6-րդ դարի չին մտածող Լաո Ցզիից:

Կարպիս Սուրենյանին առաջին անգամ հանդիպելիս այն զգացողությունն ունեցա, որ նրան վաղուց, շատ վաղուց եմ ճանաչել, այնքան հարազատ զգացի իրեն ու միշտ այն զգացողությունն եմ ունեցել, որ այդ հոգին, նրա կանչը ամենահին արմատներով, այնուամենայնիվ, գալիս էր Հեռավոր Արեւելքից, չինական հնագույն մշակույթի խորը իմաստասիրությունից:

Ներքին այդ հարստությունը, այն բարձր մշակույթը, որով սնվում էր նրա միտքն ու հոգին, արտահայտված էր և՛ գրավոր, և՛ բանավոր խոսքում, նրա ձայնի հնչերանգներում, կեցվածքում: Բնական, իրական ու գեղեցիկ էր այդ հայերենը, չէր ընդունում ավելորդ բառ, չէր սիրում շռայլություն, մինիմալիզմ չէր դա, այլ հարգանք բառի, լեզվի, մտքի հանդեպ, եւ դա էր, որ նրա խոսքը դարձնում էր կանոնիկ, կառուցիկ, ամբողջական եւ իհարկե համոզիչ: Մի ողջ ժամանակաշրջան, գրեթե վեց տասնամյակ ընդգրկող օրագրային պատումների` իրականության հանդեպ սթափ հետեւողի, վերլուծողի ու մասնակցի անաչառությունը նրան դարձրեցին իր ապրած ժամանակի ճշմարիտ վավերագիրը:

Հակոբ Ավետիքյանը այն եզակի մարդն է, որ իր թերթի էջերում մշտապես տեղ ուներ Սուրենյանի համար: Նա մեր ամենասիրված ու սպասված հեղինակն էր, որից սովորելու շատ ու շատ բան ունեինք եւ ունենք: Իսկ իր խոսքի, հրապարակվող նյութի հանդեպ նախանձախնդրությունն ու ուշադրությունը ուղղակի հիացնող էր:

Եվ լավ է, որ Հակոբ Ավետիքյանը մտադրություն, ցանկություն հայտնեց «Ազգ»-ում տպագրված Սուրենյանի էսսեների առանձին ժողովածուի հրատարակման:

Հայի, նրա պատմության, մշակույթի, երկփեղկված ճակատագրի ֆենոմենը Սուրենյանի գրականության աստղն էր, հայրենադարձությունը, հայրենադարձ հայի հոգեբանությունը` առանցքային:

Երեւանում նրա ամենասիրած վայրերից մեկը Ծիծեռնակաբերդն էր: Երբ պատմում էր, որ ամեն օր լուսաբացին քայլելով տանից բարձրանում է Ծիծեռնակաբերդ, ես մտովի դա պատկերացնում էի իբրեւ ծես, յուրատեսակ մեդիտացիա: Կռահել էի փորձում, թե ինչ խոհեր ու զգացումներ նա կկիսեր վեր բարձրացող ճանապարհի ծառի, խոտի, հողի, իր հիշողության հետ... Հիմա մտածում եմ` ինչ կասեր նա մեզ, եթե այսօր բարձրանալու լիներ Ծիծեռնակաբերդ:

Ես փորձում եմ տեսնել նրա աչքերի մաքուր խորքերում պահված հուզմունքը...

# Աշխեն Քեշիշյանը իրաքյան պարբերականում


altaakhi.net
مع الشاعرة الأرمينية المعاصرة
أشخين كيشيشيان
بواسطة جواد ملكشاهي — آخر تحديث أكتوبر 12, 2025
حوار: عطا درغام
أشخين كيشيشيان صحفية محترفة. عملت لسنوات عديدة كصحفية في القسم الثقافي، وفي السنوات الأخيرة كتبت بشكل رئيسي عن الأفلام العالمية والأرمنية. دخلت مجال الأدب بنشاط خلال السنوات الثلاث الماضية، وبدأت بالنشر على مواقع أدبية مرموقة. وهي تستعد لنشر مجموعة من قصائدها.

Իրաքում լույս տեսնող քրդական «Իրաքի եղբայրություն» արաբալեզու թերթում լրագրող **Աթթա Դարգհամին** տպագրել է 8 էջանոց հարցազրույց երեւանցի երիտասարդ լրագրող եւ բանաստեղծուհի **Աշխեն Քեշիշյանի** հետ` նաեւ արաբերեն թարգմանությամբ ներկայացնելով նրա «Ճանապարհները երբեմն իրենք սկսում են քայլել» եւ «Երբեմն հրեշտակն ընկնում է իմ ուսերից» բանաստեղծությունները: Դարգհամին Քեշիշյանի պոեզիային ծանոթացել է «Գրանիշ» առցանց գրական կայքէջում: Հարցազրույցում Քեշիշյանը պատմել է իր նախնիների մասին, նշել, որ տատիկն արմատներով եղել է Ադանայից, խոսել ժամանակակից հայ պոեզիայի, իր գրական գործունեության մասին:

Աշխեն Քեշիշյանը (ծնված 1982-ին) որպես լրագրող աշխատել է «Իրավունք», «Հրապարակ» թերթերում, kinoashkharh.am կայքէջում` հիմնականում լուսաբանելով Հայաստանի մշակութային կյանքը: 2007-ին լույս է տեսել նրա «Տես» բանաստեղծությունների ժողովածուն:

Մինչ այս մի քանի ամիս առաջ Աշխեն Քեշիշյանի «Այս հողը, որ հոսում է մեր ձեռքերի ափերից» բանաստեղծությունը **Սեվիեր Մեսչերիլի** թարգմանությամբ լույս է տեսել Հնդկաստանի մալայամ լեզվով:

Ա. Բ.

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Անտոնի Չեքեմյան՝ գիտնականը, մարզիկը, թաիթահայը

ԵՐԵՎԱՆ-ՖԱԱ՛Ա, Թաիթի, Ֆրանսիական Պոլինեզիա - Անտոնի *Չեքեմյանը (ծն. 1974, Վալանս, Ֆրանսիա) մարդկային աշխարհագրության, աշխարհաքաղաքականության, շրջակա միջավայրի գիտությունների, գյուղատնտեսության, քաղաքային եւ տարածաշրջանային ծրագրման մասնագետ է: Գրենոբլի Քաղաքային ծրագրման ինստիտուտում ստացել է բակալավրի եւ մագիստրոսի աստիճան ծրագրման եւ հետազոտության ոլորտում: Դոկտորական թեզը, որ քննում է Եվրոպական Միության միասնական ագրարային քաղաքականության ազդեցությունը Ֆրանսիայի գյուղական համայնքների վրա, 2010-ին պարգեւատրվել է Ֆրանսիայի Գյուղատնտեսական ակադեմիայի մեդալով: 2013-ից դասավանդում եւ հետազոտություններ է կատարում Ֆրանսիական Պոլինեզիայի համալսարանում: 2023-ին Ավինյոնի համալսարանից ստացել է հետդոկտորական որակավորման վկայագիր: Նույն թվականին հրատարակել է «Կլիպերտոն. Լա Պասիոնի մնացորդները. Հյուսիս-Արեւելյան Խաղաղ օվկիանոսի միակ ֆրանսիական մարջանակղզու հետաքննություն» գիրքը, որը նվիրված է քիչ ուսումնասիրված անմարդաբնակ Կլիպերտոն կամ Կրքերի կղզուն...*

**-Սիրելի՛ Անտոնի, ինչպե՞ս կբնորոշեք ձեր գիտական ուղին:**

-Իմ գիտական ուղին որոշ չափով անսովոր է: Սկսել եմ մասնագիտական ուսումնասիրություններից՝ շրջակա միջավայրի բնագավառում, ապա անցել ծովային կենսաբանության ոլորտ: Համալսարանական կրթությունն ինձ հնարավորություն տվեց կենտրոնանալ «քաղաք-բնություն» հարաբերության վրա: Լոթարինգիայի համալսարանում չորս տարի դասավանդելուց հետո հաստատվեցի Ֆրանսիական Պոլինեզիայում: Այստեղ իմ հետազոտական աշխատանքն ինձ տվեց զգացական խորաթափանցություն, որը բացակա էր նախորդ գործունեությանս մեջ: Ինձ անհրաժեշտ էր զգալ տարբերություն, բայց միաժամանակ արմատավորված լինել ազգակցական մտերմիկ զգացումի մեջ: Ֆրանսիական Պոլինեզիան իր մշակույթով եւ արժեքներով ինձ համար ամենահարմար վայրն է, քանի որ կապ է ստեղծում իմ հայկական ծագման հետ:

**-Կարծում եմ՝ շատ հետաքրքրական պիտի լինի արեւադարձային կղզում ապրել եւ այն ուսումնասիրել: Ի՞նչ հետազոտությունների մեջ եք ներգրավված:**

-Իմ հետազոտությունը կենտրոնացած է արեւադարձային կղզային տարածքներում տարածքային եւ առողջապահական խնդիրների վրա: Վերլուծում եմ ագրոարդյունաբերական



մոդելների եւ ավանդական պրակտիկաների միջեւ առկա լարվածությունը՝ առանձնացնելով տեղական լուծումներ, ինչպիսիք են համայնքային այգիները եւ կարճ սննդային շղթաները: Ուսումնասիրում եմ սննդի ինքնավարության, ինքնապաշարային գյուղատնտեսության, հանրային առողջապահական քաղաքականությունների եւ տեղական դինամիկայի կապը: Հետազոտությանս նպատակը լայն մտածողություն զարգացնելն է անցման փուլում գտնվող տարածքների վերաբերյալ, որոնք կանգնած են համաշխարհայնացման եւ կլիմայական փոփոխությունների առջեւ:

**-Սպորտը կարծես ձեր կյանքի մեկ այլ հիմնարար կողմն է...**

-Յոթ տարեկանից զբաղվել եմ ձյուդոյով՝ ներշնչվելով ֆրանսահայ մարզիկ Բեռնար Չուլույանի (1953-2019) օրինակից, որը 1981-ին դարձել է աշխարհի չեմպիոն: Փարիզում երկու անգամ մասնակցել եմ Ֆրանսիայի կորպորատիվ առաջնություններին, դարձել Ֆրանսիական Պոլինեզիայի ձյուդոյի փոխչեմպիոն 2021-ին եւ չեմպիոն՝ 2022-ին: 2023-2024 թթ. ներկայացրել եմ Պոլինեզիան Խաղաղօվկիանոսյան խաղերում: Ունեմ երկրորդ դանի սեւ գոտի: Եվ դեռ հիսուն տարեկանում շարունակում եմ զբաղվել այս սպորտով: Բայց արդյունքներից բացի, ձյուդոն ինձ համար եղել է ավելին, քան սպորտը. այն իմ կյանքի հավասարակշռությունն է, ինքնաճանաչման ճանապարհը, ինքնագնահատման միջոցը: Նրա բարոյական կոդը՝ մեծահոգություն, քաջություն, անկեղծություն, պատիվ, համեստություն, հարգանք, ինքնակառավարում, ընկերություն, դարձավ այն գործելակերպը, որը ես կիրառում եմ ընտանիքում, մասնագիտական ու անձնական կյանքում: Այն օգնեց ինձ դիմակայել դժվարություններին եւ պահպանել ուժեղ արժեքներ, հատկապես գիտական աշխարհում, որտեղ հաճախ առկա է ստոր ու նախանձալից վարվելակերպ:

Նաեւ երկար տարիներ զբաղվել եմ կամավոր դասավանդմամբ՝ ակումբներում, դպրոցներում, տարբեր խմբերի հետ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների: Ձյուդոն փոխանցելը միայն տեխնիկայի փոխանցում չէ. դա կյանքի փիլիսոփայության ուսուցանում է:

Խաղացել եմ նաեւ ռեգբի, այս թիմային մարտարվեստը նույնպես գրավեց ինձ՝ «համարձակությամբ եւ իմաստությամբ», ինչպես ասված է դիպլոմում:

**-Խնդրեմ պատմե՛ք ձեր հայ նախնիների մասին: Չեքեմյան ազգանունն էր կրում սփյուռքահայ գրող Արամ Հայկազը...**

-Իմ պատմությունը սկսվում է Ֆրանսիայի Վալանս քաղաքից, որն ունի աչքի ընկնող հայկական համայնք: Ես իմ ընտանիքի արտագաղթի ու դիմակայության պատմության արդյունքն եմ, պատմություն, որն, իմ կարծիքով, արտացոլում է մեր ժողովրդի քաջությունը: Հայրական տատս՝ Աղավնի Կարապետյանը, ծնունդով Խարբերդից, Հայոց ցեղասպանության ժամանակ հայտնվել է մահվան եզրին, բայց հրաշքով նրան փրկել է իր հորաքույրը, եւ նա ի վերջո միացել է իր ընտանիքին Ֆրանսիայում: Պապս՝ Պետրոս Չեքեմյանը, ծնունդով Մալաթիայից, մասնակցել է Երկրորդ աշխարհամարտին որպես ֆրանսիացի՝ տակավին չլինելով քաղաքացի եւ գերության մեջ է եղել յոթ տարի:

Այս գոյատեւման եւ պայքարի պատմությունն իմ ինքնության հիմքն է, որը սնուցում է իմ մարդասիրական հանձնառությունը: Վալանսի Հայ մշակութային կենտրոն այցելելն ու մեր ազգանունն այնտեղ տեսնելը խորը տպավորություն է թողել ինձ վրա...

**-Անտոնի, ասացիք, որ Պոլինեզիան արձագանքում է ձեր հայ ծագմանը: Կպարզաբանե՞ք:**

-Պոլինեզիան ինձ համար հիշողության եւ դիմակայության երկիր է, որը կապ է ստեղծում իմ հայ արմատների հետ: Ես այդ մասին նույնիսկ նշել եմ «Արեւադարձային գյուղատնտեսություն կղզային միջավայրում՝ ավանդույթների եւ նորարարության միջեւ» գրքիս առաջաբանում: Ես մեծացել եմ մի ընտանիքում, որը մեծապես ազդվել է Ցեղասպանությունից, տանջանքներից, մահվան երթերի, ջարդերի, բռնաբարությունների ու ամենաանմարդկային սպանությունների հանդեպ կույր եւ խուլ պետություններից: Շատ վաղ հասկացա «արտագաղթ», «տառապանք», «վերականգնում» բառերի նշանակությունը, որոնք պետք է անծանոթ լինեին երեխաներին:

Հայոց լեզուն, որով խոսում էր հայրս եւ որ լսում էի տատիս՝ Արավնիի տանը, նրա ընկերուհիներից եւ Վարդուհի ու Ալիս հորաքույրերից՝ ինձ մանկուց տեղափոխում էին Հայաստան: Պոլինեզիան, որպես գաղթերի, ձուլման եւ վերածննդի երկիր, ինձ հարազատ է, արձագանքում է հայերի պատմությանը, մի ժողովրդի, որը ստիպված է եղել վերակազմավորվել սփյուռքում: Ապրելով այստեղ՝ ես վերաբացահայտեցի հողի եւ փոխանցման այն ուժը, որը կարեւոր է նաեւ իմ ինքնության համար:

Ես հպարտ եմ իմ ազգանվամբ, որը փոխանցեցի Թաիթիում ծնված երկու երեխաներիս, որոնց տվել եմ ֆրանսիական, հայկական եւ պոլինեզական անուններ՝ Անուկ-Աղավնի-Ատեա եւ Ակսել-Ազատ-Արոմա: Ես շեշտում եմ իմ ծագումը, քանի որ պատկանում եմ երրորդ սերնդին, որը տեսել է, թե ինչպես են իր պապերը եւ ծնողները ծանր աշխատել՝ ապրուստ վաստակելու համար «ստանձնելով առաջին պատահած թափուր աշխատանքը, ինչը հնարավոր էր անել անգամ իրենց օտար շեշտով», ինչպես ասել է մեծն Ազնավուրը: Լավ ինտեգրվել, աչքի չընկնել, ամեն գնով ցույց տալու, որ լավ ֆրանսիացի քաղաքացի ենք... Բայց հանուն ինչի՞: Ես բախվեցի ցեղային խտրականությանը դեռեւս դպրոցում՝ սոսկ ոչ ֆրանսիական ազգանվանս պատճառով: Ուստի շատ շուտ անցա անպաշտպանների, հաշմանդամների, օտարների, կարճ ասած՝ տարբերների եւ մերժվածների կողմը: Ծնողներիս համար կարեւոր էր ինձ տալ իմ այլությունը քողարկող անուն, մինչդեռ ես կուզեի կոչվել Ազատ՝ Անրի Վեռնոյի «Մայրիկ» ֆիլմի հերոսի անվամբ: Ազատությունը թանկ է մի ժողովրդի համար, որը խոցվել է բոլորի աչքի առաջ, առանց որեւէ արձագանքի...

Ուստի ես այլեւս չեմ թաքնվում: Ես ապրում եմ, աշխատում, հաջողության եմ հասնում: Ամենը, ինչ անում եմ, ինչի հասնում եմ՝ ինձ համար է, շնորհակալություն հայտնելու համար ընտանիքիս՝ աջակցության եւ բարության համար, որպեսզի նրանք հպարտ լինեն ինձնով, մեզնով, իրենցով...

**- Ձեր երեխաների հայկական առաջին անուններից բացի, ընտանիքում կա՞ն այլ հայկական ազդեցություններ:**

-Այո՛, շատ կան: Նախ՝ լեզուն: Հայրս խոսում էր հայերեն, եւ չնայած ես այն լիարժեք կերպով չեմ ժառանգել, հիշողությանս մեջ պահել եմ որոշ արտահայտություններ, որոնք ինքնություն են ձեւավորում: Ժամանակին նույնիսկ փորձեցի հայերեն սովորել մի ընկերակցության միջոցով, բայց մեկ տարին բավական չէր՝ այդ գեղեցիկ, հարուստ ու բարդ լեզուն ամբողջությամբ յուրացնելու համար:

Հետո՝ խոհանոցը, մի իրապես կենդանի եւ համեղ ժառանգություն: Ես մեծացել եմ սուրճի, ձիթապտղի, բաստուրմայի, սուջուխի, ծիրանի, խուրմայի բույրերով... Սիրում էի, երբ խոհանոցը զբաղեցնում էին տիկնայք՝ պատրաստելով տոլմա, բյորեկ եւ այլ դժվար պատրաստվող, բայց արագ սպառվող համադամներ: Տատիկս հիանալի խոհարար էր, որի ուտեստները համեմատելի չեն ցանկացած արեւելյան ռեստորաններում կամ անգամ Թուրքիայում՝ Մալաթիայում փորձածս ոչ մի կերակուրի հետ: Իմ ֆրանսուհի մայրն էլ սովորեց հայկական ճաշեր պատրաստել, իսկ հորաքույր Ալիսը մինչ այժմ շարունակում է այս ավանդույթը՝ ուրախացնելով ինձ հատուկ ուտեստներով եւ պարբերաբար Թաիթի ուղարկելով արեւելյան աղացած սուրճ, որն այստեղ չկա: Ամեն առավոտ մեր ընտանիքը որպես ծիսական արարողություն խմում է հայկական-թաիթյան սուրճ՝ պատրաստված տատիկիս պատկանած էմալապատ ջազվեում կամ սրճեփում (*այս բառն Անտոնին ասաց հայերեն - Ա. Բ.*): Հայրս ինձ ստիպում էր խմել այն, երբ ես երեխա էի եւ պատրաստվում էի ձյուդոյի մրցումներին: Այս պարզ արարողությունը հիշողությունը պահելու միջոց է:

Մեր ընտանիքում շատ կարեւոր էր նաեւ իմ հորեղբայր Ժիլբերը: Սիրահարված հայոց պատմությանն ու մշակույթին՝ նա տպավորիչ գիտելիքներ էր կուտակել մեր ժողովրդի ու նրա ճակատագրի մասին: Փախստականների ու վերապրածների համար միշտ հեշտ չէ այդ պատմության մեջ խորանալը: Հորեղբորս մասին սիրով ասում էինք, որ նա «ամենահայն» է Ֆրանսիայում: Նրա զրույցները, ընթերցումները (օրինակ, Վահե Քաչայի «Մի դաշույն այս պարտեզում» վեպը) ու վերլուծությունները սնեցին իմ երեւակայությունը եւ ամրապնդեցին պատմությանը պատկանելու զգացողությունը: Մի անգամ նա ինձ տարավ լսելու վերջերս վախճանված ֆրանսահայ աշխարհաքաղաքագետ եւ էսսեիստ Ժերար Շալիանի դասախոսությունը եւ նրանից նվեր ստացա «Իմ հիշողության հիշողությունը» հատորը, որն արագ «կլանեցի»: Դրանից տարիներ անց համարձակվեցի Ժերար Շալիանին խնդրել գրելու Կլիպերտոն կղզու մասին իմ գրքի նախաբանը: Նա սիրալիր համաձայնեց՝ նշելով, որ իր մայրը նույնպես Չեքեմյան էր: Չգիտեմ՝ որքանո՛վ հայ եմ ես, բայց թվում է, որ այն գերիշխում է իմ մեջ: Շատ եմ սիրում ձիավարել՝ պատկերացնելով ինձ դաշտերի մարտիկ, սիրում եմ նուռ ուտել, ձյուդո պարապել արեւելյան երկրների ազդեցությամբ, սիրում եմ հասմիկի, քիմոնի բույրերը...

⇨7

# «Մատրյոշկա» ցանցը Փաշինյանին մեղադրում է «տոլեռանտություն» սերմանելու մեջ եւ տպագրում է արհեստական բանականության ստեղծած վաս պատկերներ

*«Ինսայդեր» (The insider) հետաքննական-վերլուծական կայքում ամսույս 11-ին հրատարակված հոդվածը թարգմանաբար ներկայացնում ենք մեկ-երկու աննշան հապավումով: Ռուսերեն-անգլերեն այս լրատվամիջոցի խմբագրակազմը տեղաբաշխված է ամբողջ աշխարհում:*

Կրեմլամետ «Մատրյոշկա» բոտերի ցանցը նոր արշավ է սկսել ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** դեմ՝ երկրում 2026 թվականի հունիսին կայանալիք խորհրդարանական ընտրությունների նախաշեմին: Այս մասին «Ինսայդեր»-ին պատմել է «Բոտարգելիչ» նախագիծը (antibotnavalny): Նախագծի վերլուծաբանների խոսքով՝ «Մատրյոշկան» իր «գործունեությունը» Հայաստանում սկսել է ռեկորդային առաջանցիկությամբ՝ ընտրություններից ութ ամիս առաջ: Անցյալ տարվա ԱՄՆ նախագահական ընտրություններից առաջ բոտերը սկսել էին ապատեղեկատվություն տարածել հուլիսի 15-ին՝ ընտրությունների օրվանից (նոյեմբերի 4) 3,5 ամիս առաջ, իսկ նախքան Մոլդովայի խորհրդարանական ընտրությունները՝ ապրիլի 13-ին, կամ սեպտեմբերի 28-ին տեղի ունեցած քվեարկությունից 5,5 ամիս առաջ:

Բոտերը Թվիթեր (X) եւ ԲլուՍքայ սոցիալական ցանցերում տարածում են արեւմտյան լրատվամիջոցների բովանդակության ներքո քողարկված տեսանյութեր: Այդ տեսահոլովակներում քննադատում են Փաշինյանին «Հայաստանի մշակութային կոդը ոչնչացնելու» եւ «ոչ ավանդական արժեքների նկատմամբ հանդուրժողություն պարտադրելու» համար: Բացի այդ, դրանցում վարչակազմին մեղադրում են ընդդիմադիր լրագրողներին ու բլոգերներին սպառնալու եւ «Չորրորդ հանրապետություն» ստեղծելու «անիրատեսական ու վտանգավոր» ծրագիր առաջ մղելու մեջ (եզրույթը Փաշինյանի կողմից «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համագումարում առաջարկված եւ համագումարի մասնակիցների կողմից ընդունված հռչակագրից է, որը նկատի ունի 2026 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո ներկա կառավարության լիազորությունների ժամկետի եւս հինգ տարով երկարաձգում, հանրաքվեով նոր սահմանադրության ընդունում, Լեռնային Ղարաբաղի (Արցախի) տարածքի նկատմամբ պահանջներից վերջնական հրաժարում եւ Եվրոմիություն մտնելու կուրսի իրականացում):




Բոտերը նաեւ տարածել են Փաշինյանի՝ արհեստական բանականության օգնությամբ ստեղծված պատկերներ, որոնցում նրան նվաստացնում են Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւը**, Թուրքիայի նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանը**... եւ ԱՄՆ-ի նախագահ **Դոնալդ Թրամփը**...

Ինչպես նախկինում գրել էր «Ինսայդեր»-ը, «Մատրյոշկան» առաջին անգամ Փաշինյանի նկատմամբ հարձակում էր ձեռնարկել ամռան սկզբին: Նրան քննադատում էին «Մերձավոր Արեւելքում կոռուպցիայի ամենաբարձր մակարդակի» եւ Հայոց ցեղասպանությունը լռության մատնելու համար, իսկ որոշ բոտեր պնդում էին, թե նա իբր «ուժեղ հանգստացնող միջոցներ» է ընդունում: Այդ ժամանակ հարձակման առիթը, հավանաբար, Փաշինյանի Անկարա կատարելիք այցն էր: Հոկտեմբերին «Ագենսի» հրատարակությունը պատմում էր, որ «Մատրյոշկա» բոտերը սկսել են սոցիալական ցանցերում տարածել տեսանյութեր՝ օգտագործելով Օսվենցիմ համակենտրոնացման ճամբարի նախկին կալանավորների անձնատիպերը: Տեսանյութերում Փաշինյանին մեղադրում են «հայոց խորհրդանիշների համար գազախցիկներ կառուցելու եւ դրանք Արարատ լեռան վրա փորձարկելու» մեջ (նկատի է առնվում Հայաստանի կառավարության՝ սահմանային անցակետերի դրոշմանիշների վրայից հայերի համար սրբազան եւ այժմ Թուրքիայի տարածքում գտնվող Արարատ լեռան պատկերը հեռացնելու որոշումը՝ որպես տարածքային պահանջների բացակայության նշան):

Լեռնային Ղարաբաղի (հայկական անվանումը՝ Արցախ) տարածքի շուրջ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտությունը շարունակվում է 1980-ականների վերջերից: Չնայած իր գերակշռող հայ բնակչությանը, Հայաստանի եւ Ադրբեջանի՝ ԽՍՀՄ կազմի մեջ մտնելուց հետո Լեռնային Ղարաբաղը ներառվեց Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում՝ ինքնավարության իրավունքներով: 1992-1994 թվականների առաջին Ղարաբաղյան պատերազմից հետո Լեռնային Ղարաբաղը դարձավ փաստացի անկախ, չճանաչված հանրապետություն: 2020 թվականին Ադրբեջանը Թուրքիայի աջակցությամբ, ռազմական ճանապարհով գրավեց Լեռնային Ղարաբաղի մի մասը, իսկ 2023 թվականին՝ նրա ամբողջ տարածքը, ինչի արդյունքը եղավ այն, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դադարեց գոյություն ունենալուց եւ գրեթե ամբողջ հայ բնակչությունը փախավ Հայաստան: Չնայած այն բանին, որ 2020 թվականի հրադադարի համաձայնագրի պայմաններով տարածաշրջանում ներկա էին ռուսական խաղաղապահ ուժերը, Ռուսաստանը 2023 թվականին չխոչընդոտեց Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի վերջնական գրավմանը, ինչի պատճառով Ռուսաստանի եւ Հայաստանի հարաբերությունները խիստ վատացան:

**Թարգմանությունը՝**
**Գեղամ ՄԿՐՏՉՅԱՆԻ**

# Ռուսաստանում դավաճանություն են կոչել «Նոր Հայաստան» կառուցելու Փաշինյանի պլանները

Հայաստանի «Չորրորդ հանրապետության», նրա ոչ թե Երրորդի նման «հակամարտության տրամաբանության», այլ «խաղաղության տրամաբանության» վրա հիմնվելու վերաբերյալ վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** սեպտեմբերյան հայտարարություններին ռուսական ԱրԹիՎիԱյ-ի (RTVI) հետ զրույցում անդրադարձել է ՌԴ Պետդումայի ԱՊՀ գործերի եւ հայրենակիցների հետ կապերի կոմիտեի նախագահի առաջին տեղակալ **Կոնստանտին Զատուլինը**:

Ռուս պատգամավորի կարծիքով, Հայաստանի վարչապետը «փնտրում է գեղեցիկ փաթեթավորում» իր «ձախողված» ներքին եւ արտաքին քաղաքական քայլերի համար: Իրականում, քաղաքական գործչի գնահատմամբ, նրա հայտարարությունները «ոչ այլ ինչ են, քան սահմանադրության փոփոխություն անցկացնելու փորձ, որին, ըստ հարցումների, Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը դեմ է»: Հրապարակման մեջ բերվում են «Գելափ» հետազոտական ընկերության հարցման օգոստոսին հրապարակված համապատասխան տվյալներ:

Զատուլինը չորրորդ Հանրապետության մասին Փաշինյանի հայտարարությունները կապում է Հայաստանի տարածքում Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ ԱՄՆ-ի ղեկավարությամբ միջանցքի ստեղծման ծրագրի հետ: «Ամերիկացիների մուտքը այս զգայուն տարածք՝ սույն աղագա միջանցքը շահագործելու համար, նշանակում է այս ուղղությունից նրանց մոտենալը Իրանին, որի դեմ խաղաքարտ են շարունակում խաղարկել ոչ միայն ամերիկացիները, այլ նաեւ իսրայելցիները»,- նշել է Պետդումայի պատգամավորը: Իրանի հետ կապերը Հայաստանին օգնում էին «պաշտպանել իր անկախությունը», սակայն «միջանցքային պահանջներին իր հանձնվողությամբ» Երեւանը փաստացի հրաժարվում է Իսլամական Հանրապետության հետ համագործակցությունից եւ «այս կողմից լրացուցիչ սպառնալիք է ստեղծում Իրանի համար»,- բացատրել է Զատուլինը: Եվ ավելացրել է, թե խաղաղության համաձայնագրի քննարկման ընթացքում Ադրբեջանը որեւէ պարտավորություն չի ստանձնել Ռուսաստանի հետ առեւտրային միջանցքներ կամ հաղորդակցություններ բացելու վերաբերյալ:




Պատգամավորի կարծիքով, Փաշինյանի գործողությունները ուղղված են «ազգային գաղափարախոսության նախկին բոլոր հիմքերից հրաժարմանը, Ցեղասպանության պատմությունը հարգելուց եւ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից հրաժարմանը», նաեւ հեռանկարում Ռուսաստանի հետ դաշինքից հրաժարմանն ու նրա ազդեցությունից դուրս գալուն:

Զատուլինը հիշեցրել է, որ Հայաստանն օրենք է ընդունել Եվրոմիությանը միանալու գործընթաց սկսելու մասին, «չնայած ոչ մի Եվրոմիություն Հայաստանին չի սպասում»: Պատգամավորը հավելել է, որ 2026 թվականի մայիսին հանրապետությունում կկայանա Եվրոպական քաղաքական հանրության գագաթնաժողով, որի մասնակիցները մտադիր են «ցույց տալ իրենց աջակցությունը Փաշինյանին, պարգեւատրել հայերին ինչ-որ անայցագիր մուտքի իրավունքով»՝ Հայաստանում կայանալիք խորհրդարանական ընտրությունների շեմին: Ընդսմին, «բոլոր կանխատեսումների համաձայն՝ Փաշինյանը պարտվում է, բայց նա պետք է հաղթի Եվրամիության եւ Արեւմուտքի համար»,- նշել է Զատուլինը:

Քաղաքական գործիչը նաեւ հիշեցրել է Հայաստանի կառավարության հակամարտությունն ընդդեմ Հայ Առաքելական եկեղեցու, որը «100 տարի հայերի պետականության բացակայության պայմաններում պահպանել է նրանց ինքնությունը եւ հայ ժողովրդին զերծ է պահել ձուլումից»:

Իսկ Փաշինյանն իր գործողություններով «փաստորեն հարթում է ճանապարհը» այս ձուլման համար եւ «փորձում է համոզել հայերին, թե չնայած իրենց գլուխները խառը լինելուն, Արեւմուտքն, իհարկե, կգա Հայաստանին օգնության, եթե անհրաժեշտ լինի, բայց, ամենակարեւորը, դրա կարիքը չի լինի, քանի որ բոլորը կապրեն խաղաղության մեջ»,- նշել է Պետդումայի ԱՊՀ հարցերով հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալը:

«Ահա թե ինչ է կատարվում: Եթե այս ամբողջը... միասին վերցրած, կոչվում է Չորրորդ Հանրապետության կառուցում, ապա կարող եմ ասել, որ ես չգիտեմ որեւէ օրինակ, երբ պետականությունը որեւէ տեղ լրացուցիչ խթան է ստացել ստի, երեսպաշտության եւ դավաճանության հիմքերի վրա վերակառուցվելու արդյունքով», - եզրափակել է Կոնստանտին Զատուլինը:

**Գ. Ս.**

ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ

# Հայաստանը եւ Ադրբեջանը ՄԱԿ-ում. 2 տարբեր մոտեցում

Սեպտեմբերի 22-ից 30-ը ընկած ժամանակահատվածում ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի 80-րդ նիստի շրջանակներում մի շարք պաշտոնական եւ ոչ պաշտոնական հանդիպումներ տեղի ունեցան պետությունների ղեկավարների, բարձրաստիճան պաշտոնյաների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջեւ։ Իրադարձությունը առանձնահատուկ բնույթ էր կրում, քանի որ պետությունների ղեկավարները, արտգործնախարարները եւ այլ պաշտոնյաներ ելույթներ ունեցան՝ ցույց տալու համար միջազգային քաղաքական դաշտում իրենց երկրի քաղաքական, տնտեսական եւ մարտավարական ձեռքբերումներն ու առաջնահերթությունները, արտաքին քաղաքականության նպատակներն ու ընդհանրապես որդեգրած դիրքորոշումը աշխարհում, որպեսզի միջազգային հասարակությունը համապատասխան եզրահանգումներ կատարի դրանց հիման վրա։

Որպես ընդունված կարգ, ամեն տարի Հայաստանի պետության ղեկավարը ՄԱԿ-ի այս հարթակից աշխարհին է ներկայացնում երկրի նվաճումները, մարտավարական նպատակները եւ ուղերձները։ Այս անգամ սակայն, ՀՀ վարչապետը ուշացումով ժամանեց Նյու Յորք՝ բաց թողնելով հնարավորությունը մասնակցելու ՄԱԿ-ի կազմակերպած բարձր մակարդակի միջոցառումներին, ինչպես օրինակ՝ Մ Նահանգների նախագահի եւ առաջին տիկնոջ պաշտոնական ընդունելությունը։ Փոխարենը **Նիկոլ Փաշինյանը** ներկա գտնվեց Մոսկվայում կայացող «Համաշխարհային ատոմային շաբաթ» համագումարին՝ մոդուլային փոքր ռեակտորներ ձեռք բերելու հարցը քննարկելու Ռուսաստանի գործընկերների հետ, չնայած ԱՄՆ-ի հետ այդ բնագավառում ՀՀ-ն համագործակցության հուշագիր էր ստորագրել ընդամենը քիչ ժամանակ առաջ։

Վարչապետ Փաշինյանը Մ. Նահանգներ այցելեց սեպտեմբերի 26-27-ին։ Նրա ելույթը գլխավորապես հիմնված էր Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության հաստատմանը։ Վարչապետն իր ելույթում «խաղաղություն» բառը օգտագործեց 26 անգամ, շեշտելով՝ «Ուրախ եմ հայտարարելու միջազգային հանրությանը, որ խաղաղություն է հաստատվել Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ» եւ կարեւորելով այն ջանքերը, որոնք մի կողմից Հայաստանի տարածքով անխոչընդոտ կապ են հաստատելու Ադրբեջանի պետության եւ Նախիջեւանի ինքնավար հանրապետության միջեւ, իսկ մյուս կողմից հնարավորություն են տալու Հայաստանին՝ օգտվելու միջազգային եւ տեղական տրանսպորտային ուղիներից։ Փաշինյանը մի անգամ եւս իր երախտագիտությունը հայտնեց Մ. Նահանգների նախագահին՝ խաղաղության հաստատման գործում կարեւոր դերակատարություն ունենալու համար։

Հայաստանի վարչապետը սակայն գոհ չէր Ադրբեջանի նախագահի պնդումներից, որ Հայաստանը «կապիտուլյացիայի» է ենթարկվել, պատճառաբանելով, որ նման մեկնաբանությունը «համահունչ չէ խաղաղության համաձայնության իրականության հետ եւ նսեմացնում է դրական առաջընթացը»։ Փաշինյանը նաեւ դժգոհ էր այսպես կոչված «Զանգեզուրի միջանցք» եզրույթից, որ հայկական իրականության մեջ «ընկալվում է որպես տարածքային պահանջ Հայաստանից եւ զուգակցվում է հակամարտության հետ»։ Ըստ Փաշինյանի, այդ եզրույթը Ադրբեջանի նախագահի կողմից մի քանի անգամ հնչել է նույնիսկ Վաշինգտոնյան հռչակագրի նախաստորագրումից հետո, այն դեպքում, երբ նման եզրույթ ներառված չէ այդ փաստաթղթում։

Արժե այստեղ ընդգծել, որ Փաշինյանը բաց թողնելով նախագահ **Դոնալդ Թրամփի** եւ առաջին տիկնոջ **Մելանյա Թրամփի** նյույորքյան պաշտոնական ընդունելությունը կորցրել էր հնարավորությունը մասնակցելու Հայաստանին եւ Ադրբեջանին վերաբերող քննարկումներին, որոնցում **Ալիեւը** օգտվելով առիթից՝ միակողմանի կարողացել էր հարցի իր տարբերակը ներկայացնել եւ դրանով խորացնել նաեւ իր անձնական հարաբերությունները Մ. Նահանգների նախագահի հետ։

Իրար հետ շփումների ժամանակ Թրամփը «իմ ընկեր» խոսքերով էր դիմել Ալիեւին՝ հարցնելով՝ «ինչպե՞ս է ընթանում խաղաղությունը», «լա՞վ», «ոչ մի կրակո՞ց», իսկ Ալիեւը պատասխանել էր. «ամեն ինչ ավարտվեց օգոստոսի 8-ին»։ Նա մի անգամ եւս շնորհակալություն էր հայտնել Թրամփին՝ ավելացնելով, որ նա «հրաշք գործեց»։ Ակներեւ է, որ Ալիեւը փորձում էր ոչ միայն պաշտոնական ուժեղ կապեր հաստատել



ԱՄՆ-ի հետ, այլեւ անձնական սերտ հարաբերություններ զարգացնել Թրամփի հետ, եւ դա նրան հաջողվում էր։ «Նույնիսկ օգոստոսի 8-ից եւ դեռ ընտրություններում հաղթանակ տանելուց առաջ Ալիեւը լավ խոսքեր էր շռայլում իմ հասցեին», խոստովանել է Թրամփը, Ալիեւին նվիրելով Սպիտակ տան խորհրդանշական բանալին, նշելով, որ «նման քայլ հաճախ չի կատարում»։

Ի հակադրություն, Հայաստանի ներկա իշխանությունները ավելի սերտ ու գործնական հարաբերություններ ունեն Դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչների հետ։ Այնպես որ, կարծես հավելյալ ջանքեր են պետք գործադրել՝ հասնելու համար Ադրբեջանին եւ հարաբերությունները բարելավելու ինչպես անձնապես Թրամփի, այնպես էլ նրա Հանրապետական կուսակցության բարձրաստիճան պաշտոնյաների հետ։

Փաշինյանից առաջ ելույթ ունենալով Ալիեւը, ճիշտ է, օգտագործել էր այնպիսի հռետորաբանություն, որ համահունչ չէր «խաղաղության օրակարգի հետ»։ Նա Հայաստանին կապիտուլյացիայի ենթարկելուն էր ակնարկել՝ նշելով, որ Ադրբեջանը «հաղթանակեց թե՛ պատերազմում, թե՛ խաղաղության հաստատման գործում»։ Իսկ Հայաստանի դեմ ագրեսիան նա ներկայացրեց որպես ինքնապաշտպանություն։ Գոհունակություն հայտնեց, որ իր գործունեությունը ավարտել է ԵԱՀԿ Մինսկի խումբը, որին նա անվանեց՝ «հնացած եւ խաղաղության հաստատման հետ կապ չունեցող մի կազմակերպություն» եւ պահանջեց Ազատության աջակցության Ակտի 907 հոդվածի մեկընդմիշտ վերացումը։ Այդ հոդվածը իրականում դեռ ուժի մեջ է եւ նախագահի կողմից վերացվում է ժամանակավորապես, այնպես որ հաջորդ տարի դարձյալ վերացնելու հարկ է լինելու։

Մինչ Ալիեւը ՄԱԿ-ի հարթակը օգտագործեց հակամարտության իր տարբերակը ներկայացնելու համար, Փաշինյանը նախընտրեց Մոսկվայում առաջ տանել էներգետիկայի բնագավառում մարտավարական իր քաղաքականությունը։ Փաշինյանը Մոսկվա մեկնեց, երբ ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի 80-րդ նստաշրջանն արդեն ընթացքի մեջ էր։ Մոսկվայում մասնակցելով «Համաշխարհային ատոմային շաբաթ» համաժողովին, նա հայտարարեց, որ Հայաստանը որոշել է մինչեւ 2036 թվականը ընդլայնել Մեծամորի Ատոմակայանի գործունեությունը եւ այդ նպատակով համագործակցում է Ռուսաստանի «Ռուսատոմի» եւ միջազգային այլ ընկերությունների հետ։ Նա դարձյալ անդրադարձավ փոքր ռեակտորների հարցին, նշելով, որ այդ բնագավառում եւս Հայաստանը բանակցում է ՌԴ-ի եւ «Ռուսատոմի» հետ։

Հայաստանը ռեակտորների հարցը ավելի վաղ քննարկել էր Մ. Նահանգների հետ, եւ մեկ ամիս առաջ «Էներգիայի անվտանգության գործընկերության» ներկայացուցչի հետ հուշագիր էր ստորագրել, որտեղ հիշատակվում էր նաեւ փոքր մոդուլային ռեակտորների արտադրական տեխնոլոգիաների մասին։ Այժմ Ամերիկայի հակառակորդի հետ միեւնույն համագործակցության հետապնդումը Փաշինյանի կողմից՝ կարող է դիտվել որպես քաղաքական կասկածելի քայլ։

Ամփոփելով նշեմ, որ ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի 80-րդ նստաշրջանը ցույց տվեց ոչ միայն Հայաստանի եւ Ադրբեջանի մարտավարական տարբեր մոտեցումները, այլեւ աշխարհում նրանց քաղաքական դիրքորոշման, կշռի եւ ազդեցության անհամապատասխանությունը։ Մինչ նախագահ Ալիեւը ՄԱԿ-ի հարթակը եւ աշխարհի մեծամեծների հետ երկկողմ հանդիպումները օգտագործեց սերտացնելու եւ ամրապնդելու համար Ադրբեջանի կապերը եւ առաջ մղելու Ադրբեջանի տեսակետը, Փաշինյանը գերադասեց կենտրոնանալ Ռուսաստանի հետ էներգիայի ոլորտի հարաբերությունները զարգացնել՝ ի հաշիվ նյույորքյան բարձր մակարդակի դիվանագիտական շփումների։

Անգլ. բնագրից թարգմանեց
ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

# Անտոնի Չեքեմյան...

⇨5

**- Պոլինեզիայում հանդիպե՞լ եք ուրիշ հայազգիների։ Տարիներ առաջ կապ էի հաստատել հայ-թահիթյան ծագումով Նատաշա Միրիմանոֆի հետ, իսկ անցյալ տարի հարցազրույց վարեցի Պապեետեից Վադիմ Թումանյանցի հետ...**

-Հանդիպել եմ, դրանք հազվադեպ, բայց միշտ արժեքավոր են եղել։ Ասում են՝ «որտեղ երկու հայ կա, նրանք անպայման կհանդիպեն իրար»։ Վերջերս ստացա շատ սիրալիր հաղորդագրություն Վադիմ Թումանյանցից, որը պատմեց ձեր աշխատանքների մասին եւ արտահայտեց իր բարեհաճությունը։ Այս ժեստը խորապես տպավորեց ինձ։ Դեռ հնարավորություն չեմ ունեցել անձամբ հանդիպելու Վադիմին կամ Նատաշա Միրիմանոֆին, բայց ինձ հայտնի են նրանց անուններն ու ծագումը։ Նրանց ներկայությունը Պոլինեզիայում վկայում է հայ սփյուռքի հանդարտ, բայց իրական գոյության մասին։ Ամեն հանդիպում, նույնիսկ վիրտուալը, անմիջական համակրություն է ստեղծում։

**-Երբեւէ եղե՞լ եք Հայաստանում։**

-Տակավին՝ ոչ, բայց դա ինձ համար կենսական նախագիծ է։ Մինչ այդ ես կմեծացնեմ զավակներիս՝ պատմելով նրանց հայ Սփյուռքի, իրենց նախնիների մասին եւ փոխանցելով այդ քաղաքակրթության, մշակույթի եւ հայկական ժառանգության որոշ գիտելիքներ։ Կշարունակեմ խոսել այդ մասին, քանի դեռ անուշադրության են տրվում հալածանքները։ Դա պայքարի իմ ձեւն է։ Իմ մասնագիտության շրջանակում, հատկապես աշխարհաքաղաքագիտության դասընթացներում, ես նաեւ փորձում եմ իրազեկել այդ երկրի մասին, բացատրել դրա բարդությունը եւ կարեւորությունը, ցույց տալ տարածաշրջանի հարստությունն ու փխրունությունը։ Հակամարտությունների աշխարհագրության իմ դասախոսություններում միշտ բացատրում եմ, որ չնայած տարածված «Լեռնային Ղարաբաղ» անվանմանը՝ ես նախընտրում եմ հայերեն «Արցախը»։ «Նագոռնո Ղարաբաղ» ռուսերեն-թուրքերեն-պարսկերեն բառակապակցությունը հայոց ցավի խտացումն է, որն իր մեջ ամփոփում է այդ երեք տերությունների լեզուները, որոնք գրավել, իշխել եւ հալածել են այդ տարածաշրջանի բնակիչներին։

Ուղեւորությունը Հայաստան ինձ համար կունենա կրկնակի նշանակություն, կապված կլինի ներկային եւ ապագային՝ որպես անհատական վերադարձ ընտանեկան արմատներին եւ զավակներիս կենդանի ժառանգություն փոխանցելու միջոց։

**-Կուզեի՞ք ինչ-որ բան ավելացնել։**

-Այո, մի քանի բան...

Ինձ խորապես տպավորում է Միսաք Մանուշյանի անձը եւ կյանքը, եւ ես ուրախ ու հպարտ եմ, որ նա վերջապես մտավ Պանթեոն՝ որպես ֆրանսիական Դիմադրության մարտիկ։ Նրա քաջությունը, նվիրվածությունը եւ զոհաբերությունը մարմնավորում է մի ժողովրդի արժանապատվությունը, որը պայքարում է գոյության ու ազատության համար։ Նրա հիշատակը սնուցում է ինձ, ինչպես նաեւ Սփյուռքի բազմաթիվ ժառանգների՝ հիշեցնելով, որ հնարավոր է հավատարիմ մնալ արժեքներին նույնիսկ ծայրահեղ դժվարությունների մեջ, առանց հնազանդվելու կամ չարի հետ համագործակցելու։

Ինձ նաեւ դաստիարակել են Շառլ Ազնավուրի ձայնն ու խոսքերը, որոնք ուղեկցել են իմ մանկությունը Վալանսում։ Նրա երգերը՝ «Մամա», «Նրանք ընկան», «Ինքնակենսագրություն» եւ այլն, խոր կարոտախտով ինձ վերադարձնում են այդ ժամանակահատվածը։ Հայրս դրանք բարձրաձայն երգում էր տանը, նա կարող էր լինել Շառլի կրկնակը։ Հատկապես հիշում եմ տատիկիս նվերն իմ դոկտորականն ավարտելու առիթով՝ Ազնավուրի համերգը Կոնգրեսի պալատում։ Ինձ համար նա տոմս էր գնել առաջին շարքերում, մինչդեռ իր համար՝ հետեւում։ Այս ժեստը խորապես հուզեց եւ ցնցեց ինձ։ Ես արտասվում էի համերգի սկզբից մինչեւ վերջը։ Այստեղ՝ Թահիթիում, ես բացառիկ հնարավորություն ունեցա կրկին ներկա լինել Ազնավուրի համերգին եւ նույնիսկ ձեռք բերել նրա թաշկինակը, որ նա գործածում է «Բոհեմի» կատարման ժամանակ։ Հայրս՝ Շառլի երդվյալ երկրպագուն, այդպիսի յոթ թաշկինակ ունի։ Այդ առարկան, բացի պատմությունից, ինձ համար դարձել է խորհրդանշական գանձ, որը միավորում է մեծ արտիստին, իմ ընտանիքը, իմ հիշողությունը եւ իմ հայկական արմատները...

*Լուսանկարը՝ Դորիս Ռամզեյերի*

ԱՆԺԵԼԱ ՍԱՀԱԿՅԱՆ

**Փարիզ**

# Հայ-ֆրանսիական դարավոր բարեկամությունը մի կտավի վրա

Արվեստի աշխարհը անծայրածիր հորիզոններ ունի, անհատներն են մեզ ծանոթացնում իրենց իսկ ձեռքերով ձեւավորված կյանքի հրաշալիքներին՝ քարից մարդ ձեւավորելով, կտավի վրա մարդու եւ բնության անվերջանալի շղթան գույներով պատկերելով՝ ստեղծում մնայուն արժեքներ:

Այսպիսի արտահայտություն կա՝ երեւանյան գույներ, այդ գույների ամենավառ երանգներից մեկը Հայաստանի վաստակավոր նկարիչ **Հաղթանակ Շահումյանն** է:

Դեռեւս 2007 թվականին Փարիզում ներկա գտնվելով նրա անհատական ցուցահանդեսին, տեսնելով թե ֆրանսիացիները ինչպիսի հետաքրքրությամբ էին երկար նայում յուրաքանչյուր նկարին, մոտենում Հաղթանակին, ու հիացմունքով ասում, որ ինքը չի զիջում համաշխարհային ճանաչում ունեցող նկարիչներին, ես այդ պահին հասկացա, թե որքան կարեւոր են նման ցուցահանդեսները:

Այդ տպավորությամբ ռադիոյով (AYP FM) ներկայացրի՝ արդեն 1994 թվականից Փարիզում առաջին ցուցահանդեսից հայ համայնքին ծանոթ Հաղթանակ Շահումյանին:

Ի դեպ, 1994 թվականին Հաղթանակ Շահումյանին հնարավորություն է ընձեռվել երկու ամիս անցկացնելու Փարիզի արվեստների կենտրոնում (Cite´ des arts): Առաջին անգամ էր գտնվում արվեստների մայրաքաղաքում: Ո՞ր նկարիչը չի երազել ցուցադրվել փորձության եւ ինքնահաստատման այդ « վտանգավոր միջավայրում»: «Ներքին տագնապով էի մտածում հնարավոր ցուցահանդեսի մասին», տարիներ անց խոստովանում է Հաղթանակ Շահումյանը: «Հիշելով պատվելի մտավորական **Լեւոն Ներսիսյանին**, որն առաջին ու վերջին անգամ լինելով Փարիզում պատմում էր, որ այդ միջավայրն իրեն ծանոթ էր ու հարազատ: Նույն զգացումն ունեի եւ ես, Փարիզում հարազատ ու բարեկամ չունեի: Հենց երկրորդ օրն այցելության եկավ **Կարպիս Զըրաճյանը**, որին նամակ ունեի փոխանցելու: Հարուստ ներաշխարհով, արվեստասեր մի անձնավորություն, որի հետ լավ բարեկամներ դարձանք»:





Հաղթանակ Շահումյանին հնարավորություն է տրվում 4 օր ցուցադրվելու Ֆրանսիայի Սեն Պոլի ցուցասրահում: Հաջողությունն աննախադեպ էր: Այդ օրերին Փարիզ այցելությունների ընթացքում Հաղթանակ Շահումյանին սատարում ու ոգեւորում էին իրենց նոր բարեկամներն ու ընկերները, առանձնակի ուշադիր էր եղել Կարպիս Զըրաճյանը:

Ցուցահանդեսի վերջին օրը նշանավորվում է Գառզուի այցելությամբ, ում հետ այդ օրվա ծանոթությունն ու նրա շռայլ գովեստի խոսքերը հետագայում որոշակի դեր խաղացին Հաղթանակ Շահումյանի կյանքում: Գառզուի հրավերով իր արվեստանոցում երկար զրույց են ունենում Հայաստանում տիրող իրավիճակի, մեր երկրի մշակույթի ներկայի ու ապագայի շուրջ: Գառզուն Հաղթանակ Շահումյանին խորհուրդ է տալիս ապրել եւ ստեղծագործել Փարիզում՝ առաջարկելով իր աջակցությունը: Հաղթանակ Շահումյանն իհարկե չհետեւեց այդ խորհրդին, քանի որ ընտանիքն իր կարիքը շատ ուներ: Ցուցադրված աշխատանքներից 35-ը վաճառվել էր, շտապում էր վերադառնալ տուն:

Գառզուի հետ պայմանավորվել էին հաջորդ այցելության հանդիպել ու համագործակցել: Ցավոք, 1996թ. Գառզուի առողջական վիճակը վատանում է, եւ այդպես էլ չհաղթահարելով վերահաս հիվանդությունը 2000 թվականին հեռանում կյանքից:

Հաղթանակ Շահումյանի համար փարիզյան այցելությունների առումով մասնագիտական անգնահատելի բացահայտումներ եղան, հնարավորություն ունեցավ պատկերասրահներում ու ցուցասրահներում տեսնել շատ երկրների արդի նկարիչների արարումները: Տեսանելի դարձան այն տարբերություններն ու խնդիրները, որոնք խանգարել էին հայ տաղանդավոր շատ նկարիչների սերտաճելու եւ արժանի տեղ գտնելու համաշխարհային արվեստում: Մոտիկից ծանոթանալով սիրում է Ֆրանսիայի նրբանկաս արվեստասերներին, որոնք ավանդական հարգանք ու սեր են պահպանել ստեղծագործության ու ստեղծագործողի նկատմամբ: Փարիզի միջավայրում այդպես էին ե՛ւ ֆրանսիացին, ե՛ւ մեր հայրենակիցները, ե՛ւ զբոսաշրջիկների բազմությունը, որոնք հայտնվել էին այդ առեղծվածային քաղաքում: Նկարիչը նման երկրում ու միջավայրում զգում է իր արած գործի բուն իմաստն ու արժեքը:

2023թ.Երեւանում էի, օգոստոսի 25 -ին Հաղթանակ Շահումյանի հրավերով իր արվեստանոցում էի, տպավորությունները երեւակայությանս գերազանցեցին: Յուրաքանչյուր նկարչի մասին անաչառ պատկերացում կազմելու համար գեթ մեկ անգամ պետք է լինել նրա աշխատանոցում: Վաստակավոր նկարչի կոչումը չափազանց համեստ թվաց ինձ: Հաղթանակ Շահումյանը Մեծ նկարիչ է: Համոզված եմ՝ ովքեր որ ծանոթ են նրա նկարներին ու հասկապես իրեն, որպես մարդ- անհատի, ըստ արժանավույն են գնահատում նրա բարձրորակ արվեստը:

Զրույցի ընթացքում խոսելով հայ-ֆրանսիական բարեկամության մասին՝ նա ասաց, որ այդ բարեկամությունը խորհրդանշող կտավ ունի, սիրով ուզում է նվիրել Ֆրանսիայի Հանրապետությանը:

Երկու տարի է Փարիզում քննարկվում է այս հարցը:

Այս ամառ, երբ որ Երեւանում էի, Հաղթանակի հետ կրկին քննարկեցինք ու որոշ տարբերակներ առաջարկեցի, սակայն Հաղթոն քանի որ սկզբունքային մարդ է, հաստատակամ ասաց, որ Ֆրանսիային նվիրելու նպատակով է կտավը ստեղծվել, ամեն մի շտրիխ պատկերելիս միահյուսվել է հայ - ֆրանսիական բարեկամության դարավոր ակունքների պատմությամբ:

Երբ եւ ինչպես այս կտավը կունենա իր հանգրվանը, ցույց կտա ժամանակը:

# Բալաքյանի նոր ժողովածուն՝ «Նյույորքյան եռերգություն»



Չիկագոյի համալսարանի հրատարակչությունը օրերս լույս է ընծայել Պուլիցերյան եւ այլ մրցանակների դափնեկիր **Փիթեր Բալաքյանի** բանաստեղծությունների նոր գիրքը **«Նյույորքյան եռերգություն»** խորագրով: Հնարամիտ, էլիպտիկ եւ խորիմաստ լեզվապատկերով գրված այս երկարաշունչ պոեմը բաժանված է երեք մասի եւ նկարագրում է մի մարդու ճանապարհորդությունը 1960-ական թվականներից մինչեւ 21-րդ դարի առաջին տարիները: Ճանապարհորդությունը, որ հիմնականում տեղի է ունենում Նյու Յորքում եւ Նյու Ջերսիում, զգացականի եւ երեւակայականի միաձուլումն է՝ հիմնված պատմական իրադարձությունների եւ անձնական փորձառությունների վրա, որոնց թողած խորը, անջնջելի տպավորությունների շարքը ներառում է Հայոց ցեղասպանությունը, Հիրոշիման, Վիետնամը, Իրաքի դեմ Մ. Նահանգների պատերազմը, ինչպես նաեւ ՋԻԱՀ-ի համաճարակը, կլիմայի փոփոխության ճգնաժամը եւ 9/11-ի ահաբեկչությունը: Պոեմի գերիշխող գաղափարը 2009-ին «60 րոպե» հեռուստատեսային անձնակազմի հետ Բալաքյանի շրջագայությունն է սիրիական անապատներում՝ որոնելու Հայոց ցեղասպանությունը վերապրողների հետքերը:

Գրաքննադատ **Սվեն Բիրկերտսը** նշել է. «Եռագրությունը ժամանակակից վկայությունների սխրագործություն է: Նրա բազմաթիվ բեկումներն ու շեղումները միահյուսվում են պոետի անձնավորության մեջ»: Իսկ Դեյվիդ Ուոխանը «Tikkun»-ում գրել է. «Բումերյան սերնդի հազվագյուտ ամերիկացի պոետներ այնքան խորությամբ եւ հրատապությամբ չեն բացահայտել հանրային եւ անձնական պատմությունը, որքան Բալաքյանը: Նա գիտի ինչպես անցյալի կարեւորագույն եղելությունները ճշգրիտ մանրամասնություններով եւ կոլաժային մեթոդով հանրությանը ներկայացնել եւ նոր իմաստ ու ինչեղություն հաղորդել դրանց»:




**«Արմինյն Միրոր-Սփեքթեյթր»-ից**

**Թարգմ. ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԴ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

“AZG” Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

# Ցուցադրություն՝ մրցույթից առաջ

Թեքեյան կենտրոնում հոկտեմբերի 17-ին՝ ժամը 14:00-ին տեղի կունենա «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխության «Կերպարվեստ» եւ «Դեկորատիվ-կիրառական արվեստ» անվանակարգերում ներկայացված աշխատանքների ցուցադրությունը:

«Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխությունն անցկացվում է 31-րդ անգամ:

Միջազգային մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել մոտ երկու տասնյակ հեղինակ,.որոնց թվում են ինչպես արվեստասերներին հայտնի, այնպես էլ նորահայս անուններ:

**Ցուցադրությունը բաց կլինի մինչեւ հոկտեմբերի 21-ը ներառյալ: Հոկտեմբերի 21-ին կկայանա «Վահան Թեքեյան» ամենամյա միջազգային մրցանակաբաշխության ամփոփման արարողությունը:**

Սիրով հրավիրում ենք լուսաբանելու:

**Հայաստանի Թեքեյան մշակութային միության լրատվական կենտրոն՝ հեռ.՝** 010 55 26 32, 010 57 02 83, 055 63 06 37:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 16.10.2025, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: